


Документ
установлен



19/17

19 AUG 2006

776

ԿՈՐՅՈՒ ՏԵՐ-ԱՎՀԱԿԵՐԸ ԽԱՐԳՄԵՐԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Ա. ՌԱԶԻՔ ՊՐԱԿ

Դ Բ Ե Ց


ԵՐԻՍԵ Ա. ՔԵՀ. ԳԵՂԱՄԵՆԵՑ

(Արտադրված «Հովհան» շաբաթաթերթից):



Протоіерей Егише Гегамянцъ Историче-
ские рассказы. Выпускъ первый.

(Перепеч. изъ журнала «Овітъ».)



ԻՆՔ 50 ԿՈԴ.

Տպար. Ա. Երկանցեանի:

Տիպ. Н. Эриванцова.

1917

6863

05 SEP 2011

ՀՐԱՏԱՐԵԼՈՒԹ. ԵՓԲԵՄ ՏԵՐ-ՇԵՀԱԿԵՆ ԱԾԲԴՅԱՆՆԵՐԻ

967.225
Գ-42
Հայոց ազգական պատմություններ

ԿՐՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ
Առաջին ՊՐԱԿ

ԳՐԵՑ ԵԳԻՑԵ Ա. ՔԵ. ԳԵՂԱՄԵՍՆԵՑ

(Արտասոված «Հայկա» շաբաթաթերթից):

10.01
10.02
10.03

Исторические рассказы

выпускъ ПЕРВЫЙ

Соч. протоіерея Егише Гегамянцъ

(Перепеч. изъ журнала «Овітъ».)

Տպար. և. Երևանցեանի:

Тип. Н. Эриванцова.

1917

ԱՆԴՐԵԱՍ

ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ

ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

ՅԻՇԱՑԱԿԻՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Նախապատմական շրջան

Ինչպէս բոլոր հին ազգերի, նոյնպէս և մեր ազգի նախապատմական շրջանը շատ ծութ է, անյայտ և լի առասպելներով, որոնք առանդաբար եկել հասել են մինչև մեր օրերը:

Հստ աւանդութեան մեր ազգի գոյութիւնը սկսւում է Քրիստոսից 22 դար առաջ և մեր Հայկ նահապետը՝ համարւում է Նոյ նահապետի ժոռնը: Հայկից մինչեւ Արամ հայերի կառավարութեան ձեւ՝ եղել է նահապետական և շինարար: Արամի օրովայդ ձեւ՝ փոխարկւում է միապետականի և երկիրը լնդարձակւում ու տարածւում է:

Արամի յաջորդ Արայ Գեղեցիկի օրով Հայաստանը Ասորեստանի ձեռքն է անցնում և կառավարւում է հայ իշխանների կամ նահապետների միջոցաւ: Եօթներորդ դարի սկզբում Ասորեստանը սկսում է

թուլանալ և Մարտաց կիսաքսար թագաւորն կարողանում է հայերի աջակցութեամբ նիւնուէն տապալելով՝ Պարոյը Սկայորդուն Հայաստանի վրայ թագաւոր կարգել Մարտանի հարկատութեան ներքոյ:

Պարոյը յաջորդներից մէկը՝ Երուանդ անունով՝ փորձեց Մարտաց լուծը թօթափել սակայն Աժդահակից յաղթուելով՝ պարտաւորուեցաւ՝ ա) միշտ հպատակ և նիզակակից մնալ Մարտանանին. բ) ամրոցներ չըխնել և գ) տարեկան 50 տաղանդ^{*}) հարկ վճարել:

Աժդահակի մահից յետոյ՝ Երուանդը դըժեց դաշինքը. Բայց այս անգամ է՛լ Աժդահակի թռոք, — Կիւրոսը պատժեց Երուանդին, ստանալով նրանից՝ ա) 100 տաղանդ իբրև տուգանք, 100 տաղանդ էլ իբրև փոխարինութիւն և ը) 4000 հածելազօր և 20,000 հետևակ. Եւ Երուանդի որդույն, որ էր Տիգրան Առաջինը, Կիւրոսը իրեն դաշնակից արաւ:

*) Բաբեկան մի տաղանդը 4830 ֆրանկ է:

Կ Ի Ւ Բ Ո Ս

Հին աշխարհի ամենամեծ տէրութիւններից մէկն էր Պարսկաստանը, որի հիմնագիրը հէնց այս Կիւրոսն եղաւ՝ Քրիստոսից մօտ վեց դար առաջ. Կիւրոսը պատմական մեծ և եղակի մի գէմք է, որի կառավարութիւնը, ընդհանրապէս, բարի էր և հայրական:

Նա էր, որ Ասորեստանի և Բաբելոնի թագաւորների ձեռքով իրենց հայրենիքից քշւած հրէայ ժողովրդին՝ իրաւունք տւեց Երուանդէմ դառնալու և նորոգելու. Եւ դրա համար է ահա, որ մարգարէները մեծ գովեստով են խօսում նրա մասին *),

Կիւրոսը շատ վեհանձն և ասպիտական վերաբերմունք ցոյց տւեց իր ձեռքը գերի ընկած վերոյիշեալ մեր Երուանդին և նրա ընտանիքին և նրա որդի Տիգրանին իրեն դաշնակից վերցնելով ու Բաբելոնին նւաճելով՝ ամեն կերպ աշխատեց հայերի և կորդւացիների **) լորւած յարաբերու-

*) Եսայի ծգ. 17 Երեմ. Ծա. 27—30.

**) Քիւրդերը:

թիւններին վերջ դնել, նրանց միմեանց հետ հաշտեցնելով և երկիրը խաղաղացնելով *): Եւ ահա ի շնորհս այդ խաղաղութեան էր, որ հայ ժողովուրդը ձեռնամուխ եղաւ շինարարական աշխատանքի և ծաղկեցուց երկիրն ու արհեստները յընթացս երկու հարիւր տարւայ, եբբ կիւրոսի յաջորդները նրա գծած շաւիղովն ընթանալով՝ էլ աւելի արգասարերեցին երկիրը և ապահովեցին ժողովրդի տնտեսական կենցաղավարութիւնն այն աստիճան, որ ամբողջ երկրում, և մասնաւորապէս երասի ափերում ձգւում էին «անթիւ գիւղեր լի ցորենով և գինիով, — զիւղեր լի պաշարօք. ուրեք ուրեք նաև պալատներ, բերոց ընտիր տեսակներ, պախրէ, ցորեան, գինի հին, անուշահոտ, չամիչ, ընդեղէն ամեն տեսակ, ազգի ազգի իւղեր, հալած ճարպ խոզի, կնճիթ ի դառն նշւոյ և ի բնեկնի, մզեալ իւղեր. նաև իւղերէն հանած ոգիներ, — ի մի բան՝ դար ոսկէ անդէորդութեան և մշակութեան հայոց աշխարհի **):

*) Թումայիան. Պատմ. Արևել. Խնդ. էջ 68.

**) Գաթը. Տիեզ, պատմ. համ. Ա. էջ 343.

Մակեդոնացին եւ Հռոմը

Յայտնի է, որ Կիւրոսի հիմնած Պարսկաստանը վերջերում անցաւ Աղէքսանդր Մակեդոնացու ձեռքը, և նրա վաղաժամ մահովը՝ բաժան բաժան եղաւ նրա զօրապետների մէջ, որոնք միմեանցից անկախ թագաւորութիւններ հիմնեցին:

Մակեդոնացու յաջորդներից մէկն էր Սելեկոսը, որ Սելեկեան կոչւած թագաւորութիւնը հիմնեց: Այդ թագաւորութեան մէջ մտնում էր ահաւասիկ և Հայաստանը:

Սելեկեան թագաւորութիւնը յետոյ անցաւ Պարթևների ձեռքը: Սրանցից էլ Հռոմը խլելով՝ վերածեց հռոմէական նահանգների: Պարթևներից խլած մասերի թւումն էր նաև Պոնտոսը, որի Միրհատ թագաւորը շատ սուղ ծախեց իր ազատութիւնը գոռող Հռոմի հանգէպ մի ահարկու հակառակորդ հանդիսանալով:

Միհրդատը մի շարք պատերազմ մղեց Հռոմի լէգէօնների դէմ և շատ անգամ պա-

տւով դուրս եկաւ: Փոյթ չէ եթէ վերջերում իր Փառնակէս որդւոյ դաւաճանութեամբ՝ ստիպւած եղաւ հայրենիքն թըշնամուն յանձնելով ինքնասպանութեամբ վերջ տալ իր արկածալից կեանքին:

Տիգրան Բ.

Երբեմն ինքնուրոյնաբար, երբեմն էլ Միհրդատի նիզակակցութեամբ՝ հոռմէական պատերազմներին մասնակցում էր մեր Տիգրան Երկրորդը, որ իրաւամբ Մեծ է կոչւում:

Հայ ազգի պատմութիւնը ինչապէս այս Տիգրանովն է սկսում, որ իր ձեռքի տակ ունեցած մօտ 50,000-նոց բանակով առաջինն եղաւ հայ թագաւորների մէջ, որ քաջարար ճակատ ճակատի տւեց տիեզերակալ Հոռմի հետ և հայի անունը պատկառանքով հնչեցնել տւեց իր ժամանակի բոլոր մեծ ու փոքր ազգերի և նրանց պատմութեան մէջ, որին նոյնիսկ կիկերոնը Փօրումի մէջ արտասանած ճառումը «մե-

ծազօր թագաւոր» անւանեց, և որին ահա թէ ինչպէս է նկարագրում մեր պատմահայրը «սա ամենեցունց թագաւորացն մերոց հարսաւագոյն և խոհեմագոյն, որ զսահմանս մերոյ բնակութեան ընդարձակեալ ի հինս մեր հասուցանէ յեզերս ծայրից բնակութեանց, և ամենեցունց որ առ իւրովքն էին ժամանակօք նախանձելի, և յետնոցս ըղձալի ինքն և ժամանակն իւր... արանց կացեալ զլուխ և արութիւնս ցուցեալզազգս մեր բարձրացոյց, և ընդ լծով կացեալսս լծագիր և հարկապահանջս կացոյց բազմաց... այսպէս և բազում անուանեալ Տիգրանք, մի է և միայնակ ի հայկադունս» *):

Հաղար և բիւր ափսոս, որ Միհրդատի նման, մեր այս Տիգրանն էլ իր որդւոյ, — Տիգրան փոքրի, — դաւաճանութեանը երեսից, վերջերում, ստիպւած եղաւ խոնարհել թշնամու առաջ:

Ճակատագրի դառն հեգնութեամբ ինչպէս Փառնակէսը հօրը դաւաճանելուն ի

*.) Խոր. Գլ. ԻԴ. և ԼՅ.

վարձ՝ Խրիմի թափաւորութիւնն ստացաւ։
Տիգրան փոքրն էլ —որ լաւ ճանապարհով
Պոմպէոսին յանկարծ Արտաշատ էր մըտ-
ցրել, — Մոփաց աշխարհն ստացաւ։ Բայց
երբ այդ վարձատրութիւնը նւազ համա-
լիւով դաւաճանն սկսեց տրտնջաւ, — Պոմ-
պէոսը նրան շղթայի զարկեց և կնոջն ու
որդւոցը հետ հռոմ ուղարկեց իր յաղթական
թափորի համար։ Ապա դառնալով իր առաջ
արտասուաթոր աչքերով չոքած ծերունի
Տիգրան մեծին, Պոմպէոսը իսկոյն բարձ-
րացրեց և ողջագուրանքով ասաց «Հայոց
թագաւորութիւնը կորած չէ, այլ Հռոմայի-
ցոց բարեկամութիւնը վաստակած» *):

Հռոմն ու Պարթեւացիք

Հռոմայեցիք թէպէտ և Հայաստանին տի-
րեցին, բայց չկարողացան տիրապետել,
որովհետեւ պարթևացիք երբէք չդադարե-
ցան Հայաստանը իրենց երկիրը համարե-
լուց և պահանջելուց։ Միւս կողմից հայերը
իրանք ևս Հռոմի գերիշանութիւնը առ

երեսս ճանաչելով հանգերձ, ի ներքուստ
միշտ համակիր էին Պարթևներին, իբրև ի-
րենց ցեղակիցների և կրօնակիցների, և ի-
րենց լեզովն ու սովորութիւններով նրանց
քաղաքականութեանը յարած, որդեգրւած
էին։

Այնուամենայնիւ Հռոմին ոչ մի հաշիւ
չկար Հայաստանից ձեռք քաշել, — Հայաս-
տանից, որ Արևելքի գերիշանութեան հա-
մար, իբրև քաղաքական հաւասարակշռու-
թեան յենակէտ և երկու մրցակից պետու-
թիւնների մէջ բնական պատւար իր լեռ-
նային դիրքովն ու Եփրատ ու Տիգրիս գե-
տերով, ահազին և առաջնակարգ նշանա-
կութիւն ունէր և միշտ էլ ունի։

Ահա թէ ինչու համար տիեզերակալ
Հռոմը ոչ մի զոհողութեան առաջ կանգ
չառաւ միայն թէ, փոքրիկ Հայաստանը
վերջնականապէս իր ճանկը ձգէ քաղաքա-
կիական խաղերի միջոցով։

Այսպէս Քրիստոսից 18 դար առաջ Տի-
րերիոս կայսրը իր ազգական և որդեգիր
Գերմանիկոսին Հայաստան ուղարկեց Հա-

*) Պատմ. Արեկէ, ինդ. էջ 26.

յերի իրենց ձեռքով մի այնպիսի թագաւոր ընտրել տալու, որ անպատճառ Հռոմայեցիների թեկնածուն լինի:

Գերմանիկոսը իր միսսիան յաջող կերպով վլուխ բերեց, Զենոն անունով Պոնտացուն Հայաստանի վրայ թագաւոր կարգել տալով: Սակայն երբ Զենոնը մեռաւ Պարթևացիք պահանջեցին, որ իրենք էլ իրենց թեկնածու թագաւորն ունենան Հայաստանում: Հռոմը ճարահատեալ համաձայնեց:

Եւ ահա միենոյն ազգի վրայ և միենոյն փոքրիկ երկրում երեան եկան երկու թագաւոր,—մէկը Հռոմայեցիների ագենտը, միւսը Պարթևացիների:

Դիանց լարած յայտնի ու գաղտնի ինարիքների և սաղբանքների շնորհիւ հայժողովուրդը 35 տարի շարունակ սկսեց իրար միս ուտել իրենց մէջ կուսակցութիւնների բաժանելով և բարոյապէս ունիթապէս միմեանց հարւածելով ունւաստացնելով: Եւ երբ երկու կողմն ես այն աստիճան թուլացան, որ աղջն այլիս

անկարող էր որևէ ինքնուրոյն միջոցի գիմելու:—Այն ժամանակ Հռոմայեցիք և Պարթևացիք Հայաստանի կառավարութեան համար այլ ճանապարհ ընտրեցին:

Նրանք փոխադարձ համաձայնութեամբ ուրոշեցին, որ թող Հայոց թագաւորը մի հոգի լինի, բայց ընտրող լինին Պարթևացիք, իսկ հաստատողը Հռոմայեցիք:

Տրլատ կամ Տիրիթ

Այդ որոշման համաձայն պարթևացիք ընտրեցին իրենց Վաղարշ թագաւորի կըրտասեր եղբօրը Տրդատին (որ Տիրիթ էլ է կոչում) Հայաստանի վրայ և առաջարկելուում) Հայաստանի վրայ և առաջարկելու Հռոմին ի հաստատութիւն: Տրդատը իր ընտանիքով և 3000 հայ և պարթևացի այրուձիով ճանապարհ ընկաւ դէմացի այրուձիով ճանապարհ ընկաւ դէմացի Հռոմ, կայսրի ձեռքից իր թագն ստանալու *):

*) Հայ պատմիչները Արշակունեաց առաջին թագաւորին Վաղարշակ են անւանում, մինչդեռ ժամանակակից երբեմն և ականատես Հռոմայեցի պատմանակակից: Երբեմն և ականատես Հռոմայեցի պատ-

Այս ճանապարհորդութիւնը 9 ամիս տեսեց և Հայաստանի թագաւորը, իրեկ Հռուրդավայրել ընդունելութիւն գտաբ: Ճանապարհի ծախըը ամբողջովին կայսրութեան հաշին էր լինում:

Կայսրը այդ ժամանակ յայտնի Ներոնն էր, որ Պարթևացիների ընտրութիւնը հաստելով՝ յատուկ դրամ կտրեց այդ առթիւ և մեծամեծ պարզեներով Հայաստան վերադարձրեց: Հետոն էլ ճարտարապետներ ուղարկեց, որ Հռոմայիցի Կորբուդոն զօթ փեր քարո՛քանդ արած Արտաշատ մայրաքարը՝ վերանորոգեն և զարդարեն:

Միջները՝ Տրդատ կամ Տիրիթ են անւանում: Հենց այս Տրդատի Հռոմ գնալը և կայսրից իր թագն ստանակն՝ առատ նիւթ դարձաւ խաչակիրների ժահարաբակել, իրը թէ, ո. Դրիգոր Լուսաւորիչը Տրդատ Մեծը՝ չորրորդ դարի սկզբում՝ Հռոմ են առաջել և այնտեղ կայսրից ու պապից ստացել են թագը: (Օրմանեան. Աղջապատում, էջ 109):

Ներոնի արարմունքը ներքին նպատակը Պարթևացիք շատ լաւ ըմբռնելով՝ պահանջեցին, որ Տրդատի յաջորդը անշուտ պարթևասէր անձն լինի և Հռոմը ձեռք ըաշէ թեարկութիւնը ամբողջ Հայաստանի իր թեարկութիւնը ամբողջ Հայաստանի վրայ տարածելու քաղաքագիտական ճարպիկ միջոցներից ու խաղերից:

Այդպիսի պահանջը իրեն համար վիրաւորիչ համարելով՝ Հռոմը մի շարք արշաւանքի դիմեց Պարթևների վրայ:

Առաջին արշաւանքն սկսեց Տրիանոս Կայսրը. երկրորդը՝ Մարկոս Աւելիոս, երրորդը՝ Սեպտիմոս Սևերիոս և չորրորդը՝ Կարակալլա (*):

Այս արշաւանքներից երբեմն հռոմայիցիներն էին յալթող դուրս գալիս երբեմն պարթևները: Եւ իրանց յալթութեան դէպքում Հռոմայիցիք յատուկ դրամ էին կըտքում Հայաստանի կամ «Հայաստան» կամ «Հայարել տալիս» «Հայաստան» մակագրութիւնով:

Աւելորդ է ասելը, որ այս արշաւանքները հայ ժողովրդի վրայ շատ սուղ էին

*) Պատմ. Արևել. Խնդ. էջ 36—40:

նստում և նիւթապէս, բարոյապէս ու ֆի-
զիքապէս նրան ըար ու քանդ անում, թէ-
պէտ և արշաւանքները միշտ և հանապազ
սկսում էին իրրկ թէ հայերի օգտին և
Հայաստանի բարեկարգութեան համար:

Հռոմայեցիների և Պարթևների այս պար-
բերական մաքառումները դեռ մի վերջնա-
կան եղբակացութեան չէին յանդել, երբ
այդ Երկու պետութիւնների հանդէպ մի
նոր ախոյեան դուրս եկաւ:

Արտաշէս Սասանեանը

226 թէին Պարսկաստանում տեղի ու-
նեցած յեղափոխութեամբ և Արտաւան Ե.-ի
սպանմամբ Արտաշէր Սասանեանի ձեռքով
Սասանական հին ցեղը վերականգնեցաւ
Պերսեպոլիս քաղաքում, այժմեան Նիրազի
մօտ:

Արտաշէրը Պարթև պահլաւ ցեղը Պար-
կաստանում ջնջելով չբաւականացաւ, այլ
նա ձեռնարկեց Հայաստանի միջից էլ ջըն-
ջել յիշեալ ցեղի ներկայացուցիչներին ևս
Քաղանական նպատակ ունենալով հռոմա-

յեցիներին իսպառ դուրս քշել Ասիայից:

Եւ որովհետև հայերն ազգակցական և
բարեկամական կալ ու յարաբերութիւն
ունէին մի կողմից Պահլաւների հետ և միւս
կողմից Հռոմայեցիների հետ,— ուստի շատ
պարզ է, որ նրանց վրայ ևս Սասանական
նոր իշխանութիւնը կարող չէր հաշտ աշ-
քով նայել, այլ նրանց էլ իր քաղաքական
ծրագրին հակառակորդ էր համարում: Իսկ
երբ որ հայերն ու հռոմայեցիները քրիս-
տոնէութիւնն ընդունելով՝ սկսեցին նաև
կրօնական յարաբերութիւնն ունենալ մի-
մեանց հետ, — ահա այդ ժամանակից սկսեալ
Սասանեան իշխանութիւնը ինչպէս հայե-
րին, նոյնպէս հռոմայեցիներին, իրեն հա-
մար բացարձակ թշնամի համարելով և ըն-
դունելով՝ ձեռնարկեց նրանց երկուքին էլ
պատուհասելու: Եւ նրա համար էլ Սասա-
նեանք սկսեցին մի շարք արշաւանք գոր-
ծել հռոմայեցիների վրայ:

Առաջին արշաւանքն սկսեցաւ Աղէք-
սանդր Սկերիս կայսեր ժամանակ. երկ-
րորդը՝ Գորդիանոսի, երրորդը՝ Վաղերիա-

նոսի, չորլորդը՝ Կարսոսի և Հինգերը ըզը
Գալերիոսի:

Այս արշաւանքների ժամանակ երբեմն
Սասանեանք էին յաղթող հանդիսանում,
երբեմն Հոռմայեցիք: Յամենայն դէպս պա-
տերազմող երկու կողմերիցն աւելի հայ
ժողովուրդն էր տուժում մէջանեղում: Այդ
տուժումը աւելի մեծ չափերի էր հասնում,
երբ այդ ժողովուրդը, առանց սեփական,
ինքնուրոյն ու համտատուն քաղաքական
ծրագրի, երբեմն մէկի կողմն էր հակւում
երբեմն միւսի:

Տրդատ Մեծը

Դալերիոսի արշաւանքի հետևանքով Հա-
յաստանի մեծ մասը Հոռմայեցիների աղ-
դեցութեան շրջանի մէջ մտաւ: Եւ ահա
այս միջոցներումն էր, որ Դեռկդետիանոս
կայսեր կարգադրութեամբ Խոսրովի որդի
Տրդատը հոռմէական զօրքով Հայաստան
գալով հայրենի գահը բաղմեցաւ 287
թիւն:

Ինչպէս յայտնի է Տրդատի թագաւո-

րութեան սկզբներում հայերի դարձը տե-
ղի ունեցաւ ի քրիստոնէութիւն:

Այս խոշոր պատմական դէպքը մեր ծրա-
գրից դուքս լինելով այս միայն կասենք, որ
Տրդատի կէս դար տևող թագաւորութեան
ժամանակ հայաստանը միանդամայն ա-
զատ մնաց արտաքին յարձակումներից և
պատերազմներից: Ապա թէ ոչ հաղիւ թէ
ո: Գրիգորն ու Տրդատը կարողանային ա-
ռանց առանձին սասանումների ու վանդ-
ների ի զլուխ հանել իրենց վերանորոգ-
չական մեծ գործը:

Անշուշտ վերանորոգիչների իրանց տակ-
տըն ու խոհականութիւնը ոչ պակաս
նպաստեց գործի յաջողութեանը, երբ նրանք
ժողովրդի վրայ մեծ աղեցութիւն ունեցող
հոգեոր քրմական դասակարգը իրանց կող-
մը զրաւելու համար, նրանց իրաւասութեան
տակ զտնուած մեծամեծ կալւածներին
ոչ միայն ձեւք չտւին, այլ զեռ նրանց
համար թոշակներ սահմանեցին, նրանց
զաւակներին նախապատութիւն տւին ի-
րենց հիմնած դպրոցներում ելն *):

*) Ագաթանգեղոս, Ճի.

Այս ամենի հետևանքն այն եղաւ, որ
բուն ժողովուրդն ընդգրկեց և փարեցաւ
նոր կրօնքին այն աստիճան անկեղծութեամբ ու սիրով, որ մինչև իսկ ո. Վարդանանց կուից մէկ ու կէս դար տուած,
այն է 311-ին, ի պաշտպանութիւն այդ կրօնին պատերազմի ելաւ հռոմայեցիների դէմ յանձին Մաքսիմինոս Դաժի, որ Արեւելիան կայսրութիւնն ստանալով սկսել էր հալածանք հանել հայերի դէմ, պահանջելով «զի զոհեցնեն կրոց եւ դիւաց»: Այդ պատերազմին, որի ժամանակ հայերի քաջութեան հետ միացաւ նաև նրանց կրօնական եռանդը, — Դաժը յաղթւեցաւ և քիչ յետոյ Տարօնում անձնասպանութեամբ վերջ տւեց իր կեանքին:

Նկատենք այստեղ, որ այս պատերազմը ամենալաւ ապացոյց է, որ հայերը հռոմայեցիներից շատ վաղ էին ընդունել քրիստոնէութիւնը^{*)}:

Հայ աւագանին

Հասարակ ժողովրդի նման և նրա չափ անկեղծ վերաբերմունք ցոյց չտւեց հայ աւագանին դէպի նոր կրօնը և նրան յաշակից յունախրական գաղափարը: Այլ նրա քրիստոնէութիւնը առ ահի ու առ յարգի էր, արտաքրւատ: Եւ անշուշտ դրանից է, որ ինչպէս ո. Գրիգորը, նոյնպէս և Տրդառը ծերութեան օրերում իրենց հմայքն ու ազդեցութիւնը կորցնելով քաշւեցան լեռներն ու անտառները: Այս պարագաննրանց լոգնածութեանն ու կրօնական բարեպաշտութեանը չպէտք է վերագրել բացառապէս, այլ հայ առագանիի անտարբերութեանը, և թերևս նրանց արհամարհանքին ու ատելութեանը:

Այլ կերպ անկարելի է բացատրել ո. Գրիգորի մահւան և թաղման սկզբնական պարագանները, երբ նա լեռան գլխին իր մենարանումը մեռնում է առանց ուժ և իցէ ներկայութեանը, և անծանօթ հովիւների ձեռքով պատահմամբ թաղումը է առ տեղեաւն առանց ճանաչւած լինելու:

*) Օրբ. Ազգապատ. էջ 107:

Գալով Տրդատին, —յայտնի է, որ նրան
էլ նախարարները թունաւորեցին ուղղակի
ու յայտնի^{*)}:

Շատ հաւանական է, որ Տրդատի թու-
նաւորման զործումը պարսից արքունիքի
մատը ևս խառն էր: Որովհետեւ դժւար
է պնդել, ինչ որ մեր պատմիչներն են ա-
նում, որ նախարարները սոսկ իրենց փա-
ռասիրութիւնից գրդած մոլեխինդ խմա-
ցրին ծերունի թագաւորին: Եւ եթէ Տրդա-
տի մահից անմիջապէս յետոյ նրանք ա-
ռանձին և ինքնազլուխ իշխանութիւններ
կազմեցին Սանատրուկը Փայտակարանում,
Բակուրը Աղձնիքում և Արքեղայոսը Ծոփ-
քում, այդ առանց Շապուհ Բ.-ի յայտնի կամ
գաղտնի թելաղբանքին չէր, որովհետեւ նա-
ամեն միջոցից օգտում էր ո. Գրիգորի ու
Տրդատի միջոցաւ հայերի մէջ արծարծւած
յունասիրութիւնը, արմատախիլ անելով
պարսկական թեարկութիւնը տարածել Հա-
յաստանի վրայ:

Յունասէր նախարարները

Յիշեալ վաճնդը տեսնելով յունասէր
նախարարները Արիստաէս կաթողիկոսի, —
Ս. Գրիգորի կրտսեր որդւոյ, — զիսաւորու-
թեամբ յունաց կայսեր հովանաւորու-
թեանը գլխաւոր գիտումն արին, ինզելով,
որ Տրդատի որդւոյն, Խոսրով Բ.-ին, Հա-
յաստանի վրայ թագաւոր կարգի: Կայսրը,
ինչ ասել կուղի, իսկոյն կատարեց Հայոց
կաթողիկոսի և նախարարների ինդիրը:
Եւ Հայաստան հկած կայսերական զօրա-
վար Անտիոքոսը Խոսրովի թագաւորու-
թիւնը հաստատեց և Սանատրուկին, Բա-
գուրին ու Արքեղայոսին իրենց պաշտօն-
ներիցը, — որ էր սահմանագլուխների պահ-
պանութիւնը, — հեռացնելով նրանց տեղակ
նշանակեց Բագարատ Բագրատունիին, Մէհ-
րան Բագարացին, Վահան Ամատունիին
և Մանածիր Ռշտունուն: Սակայն Խոսրով
Բ. իր կուսակիցների յոյսը չարդարացրեց,
աւելի ճիշտը չկարողացաւ արդարացնել:
Որովհետեւ բացի այն, որ ինքը «զքաջու

*) Խոր գերք թ. էջ 248

թենէ և զբարի յիշատակաց անփոյթ» *)
անձն էր, այլ նաև անզօր պարսկասէր
նախարարների մշտական հետամտութիւն-
ներն ու ինտրիքները խափանելու:

Եւ թերես Խոսրով Բ.-ի կեանքն ևս հօր
կեանքի վախճանն ունենար, եթէ որ նրան
հովանաւորէր Վրթանէս կաթողիկոսը, —
Ս. Գրիգորի աւագ որդին, —որ Տրդատի
արքունիքում 15 տարի պաշտօն վարած
լինելով տեղեակ էր աւագանիների և պա-
լատականների արամագլութիւններին ու
գործելակերպերին:

Տիրան

Խոսրովին յաջորդեց 399-ին նրա Տիրան
որդին, Բայց ստիպւած եղաւ Վրթանէս
կաթողիկոսի հետ խոյս տալ գնալ Պոլիս,
որպէսզի անձամբ անձին կայսրից օգնու-
թիւն խնդրէ Շապուհի դէմ, որ Հայաստա-
նում եղած իր բաղմաթիւ կուսակիցների
վրայ յենւելով իր ներսէն որդույն հզօր
բանակով ուղարկեց Հայաստանը գրաւե-

լու և այնտեղ թագաւոր դառնալու.

Այդ միջոցներում պարսկասէր և յունա-
սէր կուսակցութիւնների ղեկավարող նա-
խարարները «յանիշխանութեան մնացեալք
յարեան ազգ ազգի վերայ կոտորել զմի-
մրասն»:

Եւ Վրթանէս կաթողիկոսը, —որ յունա-
սէր կուսակցութիւն ղեղավարներից մէկն
էր, —մազ մնաց, որ Աշտիշատի մայր եկե-
ղեցում պատարագ մատուցանելիս երկու
հազար լեռնական Սասունցիների կատա-
րութեանը զոհ գնար «ի սաղրելոյ Նա-
խարարացն» պարսկասէրների, Սաղրիչնե-
րի միջին էր և Բակուր նախարարի կի-
նը *):

Ինչ էլ որ լինի վերջիվերջոյ յունասէր
կուսակցութիւնը յաղթութիւնը տարաւ: Եւ
Տիրանը յունական բանակով Հայաստան
դառնալով տիրացաւ իր գահին:

Սակայն շատ չանցած դժբաղդ թագաւո-
րը, մի խարդախ եղանակով, Շապուհի
ձեռքն ընկնելով երկու աչքերիցն էլ զըր-
կւեցաւ ու բանտ ձգւեցաւ:

*) Օքմանեան, Աղդապ. էջ 130,

*) Խոր, գիրք Գ. էջ 262.

Մեր պատմիչները Տիրանի կուրացումը Աստուածային պատիժ են համարում այն բանի համար, որ նա Յուսիկ և Դանիէլ կաթողիկոսին սպանել էր: Բայց Տիրանի կուրացումն ու բանտարկումը նոյնիսկ պարսկասէր նախարարների խղճի վրայ ծանրացաւ, և այս անգամ նրանք յունասէրների հետ միանալով կոստանդ Կայսեր օգնութեան դիմեցին: Եւ օգնութիւնը ստանալով յունաց զօրքի հետ միասին անհոգ և անպատճաստ Շապուհի վրայ յարձակւցան յանկարծ, որ ստիպուած եղաւ Տիրանին բանտից ազատել այն պայմանաւ, սակայն, որ նա բոլորովին չէզօք դիրք բռնէ յոյների և պարսիկների մէջ:

Տիրանը, ի հարկէ, առանց աչքերի չէր կարող երկիր կառավարել, ուստի թագաւորութիւնը իր երրորդ որդւոյն Արշակին բաժին ընկաւ, վասնզի աւագ որդին, Արտաշէսը մեռած էր, իսկ երկրորդ որդին Տրդատը Բիւղանդիոնում պատանդ էր, ուրին քիչ յետոյ կայսրը սպանել տւեց:

Արշակ

Արշակ Բ. թագաւոր դարձաւ Շապուհի պաշտպանութեամբ, և ուրիմ նա պարսից կառավարութեան թեկնածուն էր: Պարսկասէր կուսակցութիւնը այն աստիճան զօրացել էր Հայաստանում այդ միջոցին, որ Շապուհը կարողացաւ Վահան Ամատունու նման խիստ ազգեցիկ և յունասէր նախարարից հայ արևելեան բանակի հրամանատարութիւնը վերցնելով պարսկասէր Վաղենակ Սիւնեցուն յանձնել:

Այս ամենի հետեւանը նախատեսելով կոստանդ կայսրը քաղաքագիտական միջոցով կամեցաւ յունական ազգեցութիւնը գօրացնել հայերի վրայ: Իր եղբայրը կոստանցանւած էր Օլիմբիադա անունով մի յոյն իշխանութեան հետ: Բայց գեռ չպսակւած կոստանը մեռաւ: Մեր Արշակն էլ այդ միջոցին իր կնաջից նոր էր զրկւել, և 45 տարեկան մի այրի էր:

Կոստանդ կայսրը հէնց այդ Օլիմբիատային ամուսնացրեց Արշակի հետ: Այս ամուսնութեան դէմ էին Բիւղան-

զիոնի պալատականները, և մի կայսերա զունի, Կոստասի նշանածը մի քարքարոսո) հայ թագաւորին տալը վիրաւորական էին համարում հանգուցեալ կայսերազունի յիշատակին, սակայն Կոստանդ կայսրը նախապատութիւն ցոյց տւեց իր քաղաքագիտական նպատակին:

Շապուհ

Շապուհ արքան, ի հարկ է, իսկոյն ըմբռնեց Հայոց թագաւորին յոյն իշխանունու հետ ամուսնացնելու յունական ներքին խորհուրդը: Ուստի անմիջապէս Արշակին հրաւիրեց Տիգրոն, ուր Խաչիկ Աւետարանի վրայ հաւատարմութեան երդում ուտելով Արշակը մեծամեծ պատիւներով վերադարձաւ Հայաստան, և հինգ տարի ամենայն խոհեմութեամբ ու խաղաղութեամբ կառավարեց մինչև 359 թիւը, երբ Արևելեան պատերազմի նշանները երեան եկան հռոմայեցիների և պարսիկների մէջ:

Նախ քան պատերազմը Շապուհը մի յա-

տուկ գրութեամբ *) Կոստանդ կայսեր առաջարկեց պարսիկներից խլւած երկիրները, — Մակեդոնիան իր շրջակայրով, — իւրեն համար պահել իսկ ասիական երկիրները, — Հայաստան ու Միջագետքը, — Պարսկաստանին վերադաճնելով առաջն առներարիւնահեղութիւնների և աւերածութիւնների:

Կայսրը իր խիստ պատասխանատւութեամբ մերժեց Շապուհի առաջարկը: Եւ ահա փրխաւ պատերազմը:

Արշակի երրորդնազանցութիւնը

Շապուհի յանկարծական յարձակումից շշկւած Կոստանդ կայսրը կեսարիա եկաւ և Արշակին հրաւիրելով մօտը մեծ մեծ խոստումներ տւեց, միայն թէ Արշակ յանձնառու լինի յոյներին օգնելու: Հրապուրւելով կայսեր խոստումներով Արշակը դրժեց Շապուհին տւած երդմանը, և հիմա էլ Կոստանդին երդւեց և յետ դառնալով,

*) Պատմ. Արևել. ինդ. հատ. Ա. էջ 50—51.

հայկական բանակ կազմեց պարսից դէմ։
Պատերազմական փոխադարձ յաղթութիւնից ու պարտութիւնից յետոյ, —որոնց միջոցին Կոստանդը և նրան յաջորդող Յուլիանոս կայսրը մեռան, —վերջնական յաղթութիւնը պարսիկները տարան։ Եւ Յուլիանոսի յաջորդ Յովիանոս կայսրը ստիպւած եղաւ հոռմէական պատւասիրութեան համար մի ամօթալի դաշն կապել Շապուհի հետ։

364-ին դաշինքը

Այդ դաշնագլութեան զօրութեամբ Շապուհ տիրացաւ իր ցանկացած երկիրներին, որոնց մէջն էր Հայաստանի ամենաընդարձակ և ամենաալնտիր մասը^{*)}։

Դաշնագլում մի յատուկ պարբերութիւն կար, որ պարտաւորեցնում էր յոյներին ընսաւ չխառնւել հայոց զործերին, եւ

^{*)} Ղազ, Փարսկեցին շատ ընդարձակօրէն և գեղեցկօրէն նկարգում է այդ մասի Փլորտն և Փառնան, Դրուագ Ա. էջ 19—24։

Նրանց իրենց ազատ կամքին թողնել բոլորովին։

Այս պայքերութիւնը հայկական հարցի մէջ ահագն նշանակութիւն ունի։

Շապուհը հասուն քաղաքականութեան հետեւլով այդ ժամանակ վճռեց Հայաստանը ուրոյն և ինքնավար թագաւորութեան վերածելով պարսից գերիշանութեան ներքոյ, —նրանով մի թումբ, մի պատուար կանգնեցնել յոյների պարբերական ոտնաձգութիւններին և արշաւանքներին դէպի Արեկելք։

Մակայն յունական գաղտնի ինտրիկներն ու սադրանքը խոչընդոտ հանդիսացան Շապուհի ծրագրի իրականանալուն։

Այդ մենք կը բացատրենք սեր չորրորդ դրոյցով։

Հնտանեկան փոթորիկներ

Երբորդ զբոյցում մենք տեսանք, որ Տիրանի կուրութեան պատճառաւ՝ նրան յաջորդեց կրտսեր որդին — Արշակը, որովհետեւ

միջնակ որդին՝ Արտաշէսը մեռած էր, իսկ մեծ որդին՝ Տրդատը Բիւզանդիոնում պատահվեց, որին կայսրը սպանեց, երբ լուր առաւ, որ Տիրանը պարսից կողմն հակւելու միտումներ է ցոյց տալիս:

Տրդատի հետ պատահնդ էին նաև նրա որդին՝ Գնէլը, եղբօրորդին, — հանգուցեալ Արտաշէսի զաւակը:

Արշակին ամուսնացնելով իր եղբօր նշանածի հետ՝ կոստանդ կայսրը՝ հայոց արքունիքի հետ հաշտած եղաւ, և ի նշան այդ հաշտութեան՝ Տիրիթին և Գնէլին Օւլիմբիադայի հետ վերադարձրեց հայրենիք: Բացի այդ Գնէլին մոռացնել տալու համար՝ նրա դժբաղդ հօրը, — Տրդատի սպանումը կայսրը նրան հիւպատոսութեան պատիւ և շատ գանձ տւեց *):

Իր հերթում կուրացած Տիրանն էլ թուանը (Գնէլին) առանձին գգւանքով ընդգունեց և միշտ իրեն մօտն էր պահում իր պալատումը, նրանով միսիթարւում, նրանով փոխարինել կարծում նրա դժբաղդ հօրը, որի սպանման առիթը Տիրանը ինքն

էր տւել: Մի քանի ժամանակ յետոյ Տիրանը, Գնէլին ամուսնացը Սիւնեաց Անդովկ իշխանի Փառանձեմ դստեր հետ, որ թէ բնաւորութեամբ և թէ գեղեցկութեամբ միծ համբաւ էր վայելում: Միւնոյն ժամանակ նրան ընծայեցիր բոլոր կայթերն ու կալւածները:

Գնէլի հարսանեկան հանդէսը շատ շքեղ թագաւորավայել կերպով կատարեցաւ:

Անդովկ Սիւնեաց իշխանին փեսայանալով Գնէլի պատիւն էլ աւելի շատացաւ նախարարական շրջանում, և շատ նախարարներ իրենց զաւակները յանձնեցին նրան զինավարժութիւն սսվորելու համար, որովհետև Գնէլ շատ վարժւած էր այդ արհեստին Բիւզանդիոնում եղած ժամանակ *):

Տիրիթ

Գնէլին տրւած այս պատիւները, դէպի նա տածւած համակրանքը, նրա անձնա-

*) Խոր. ԻԱ. Էջ 280:

*) Խոր. ԻԱ. Էջ 280:

կան արժանիքն ու առաւելութիւնները նաև խանձ զարթեցրին Տիրիթի սրտում։ Գուցէ մի գաղտնի ցաւ էլ ունէր սրտումը, վասն զի Տիրանի անդրանիկ որդոյն, Արտաշէսին զաւակը լինելով, թագաւորութեան հասնելու միտքը ևս կը փայփայէր։ Ուստի առ նախանձու սկսեց հօրեղբօրը, — Արշակ թագաւորին միտքը պատորել, յայտնելով թէ Գնէլը մտադիր է նրան սպանել և թագաւորութիւնը գրաւել։

Արշակի զինակիրը, ոմն Վարդան Մամիկոնեան, Տիրիթի ասածը հաստատեց, նոյնիսկ երդմամբ վկայելով, որ ինքն իր ականջովը լսել է Գնէլի բերանից թէ նա իր Տրդատ հօրը սպանման վրէժը պիտի լուծէ *):

Տիրիթը նրան որսացել և նախապատրաստել էր։

Տիրանի մահը

Արշակ հաւատալով Տիրիթի և իր զինակրի խօսքերին պատւէր ուղարկեց Գնէ-

լին, որ Այրարատեան զաւանից, —ուր ըստ օրինի բացի գահաժառանգից՝ միւս թագաւորազուններն իրաւունք չունէին ընակւելու, — հեռանալով՝ գնայ լքաշուի վասպուրականի Ասքերանի (այժմ Բերկրի) գաւառը և զինավարժութիւն սովորեցնելու նպատակաւ հաւաքւած նախարարների որդիներին կշտիցը հեռացնէ։ Եւ եթէ այս հրամանը չկատարէ, — մահւամբ կը պատճուի։

Գնէլը սուս ու փուս վերցրեց ընտանիքը և գնաց նշանակուած գաւառը, Բայց այս բանը շատ ծանր և վերատորական համարելով, կուբացած Տիրանը մի խիստ յանդիմանութիւն զրեց Արշակին։ Սա զայրանալով հօրը այդ վարմունքի վրայ զաղտնի կերպով «նեղծամահ» անել տեսց նրան, այսինքն խեղդեց *):

Գալով Գնէլին՝ Վասպուրական գնալովը թագաւորիի բէժինզը ութիւնիցը չազաւեցաւ, որովհետև նրա խսկական հալածողը Արշակ թագաւորը չէր, այլ Տիրիթը,

*) Խոր. ԻԲ. էջ 281.

*) Նոյն ԻԲ. էջ 281.

որ թագաւորի առաջ Գնէլին զրպարտելով
ոչ աշնքան նրա աքսորմանն կամ տեղա-
փոխութեանն էր ձգտում, որքան նրա մա-
հւանը, սպանմանը: Եւ այդ այն նպատա-
կաւ ևեթ, Արշէսդի նրա կնոջը, Փառանձե-
մի հետ պատկի, որի վրայ Տիրիթը սի-
րահարւած էր: Չիմանալով Տիրիթի այս
ներքին նպատակը Արշակը բաւականացաւ
իր կեանքն ու թագը ևեթ ապահովելու
Գնէլից: Սակայն Տիրիթը չվճատեցաւ, և
գինակիր Վարդանի հետ խօսքը մէկ արած՝
այնքան զրպարտեցին ու չարախօսեցին
Գնէլի մասին, որ Արշակը, վերջիվերջոյ,
վճռեց նրա կեանքին ևս վերջ տալ:

Գնէլի սպանումը

Եւ իր այդ վճիռը Արշակը վլուխ բերեց
խարդախութեամբ, որսի ժամանակ, իրքն
թէ սխալմամբ, երազմակ դահճապետի ձեռ-
քով, նրան սպանել տալով:

Այդ որսորդութիւնը տեղի ունեցաւ Նա-
ւասարդի տօների օրերից մէկում: Նաւա-
սարդ տօնը շատ մեծ հանդէսներով էր կա-

տարւում ի ներկայութեան թագաւորի,
կաթողիկոսի, աւագանիի, զօրքի և ժողո-
վրդեան խուռն բազմութեան:

Արշակի յատուկ թղթով *) Գնէլն ևս
ընտանիքով հրաւիրւած էր այդ հանդի-
սաւոր օրերն թագաւորի հետ միասին անց-
կացնելու: Եւ միամիտ Գնէլը թագաւորի
հրաւիրաթուղթը հաշտութեան կամ բարե-
հաճութեան նշան համարելով վերցրել էր
կողջն ու եկել: Թալակն ընկել:

Գնէլի մահը մեծ իրարանցում ձգեց նա-
ւասարդի տօնին մասնակցող բոլոր խաւե-
րում:

Ամենից աւելի զայրացած էր Ներսէս
կաթողիկոսը, որ շատ լաւ և հաստատ կեր-
պով իմացաւ Գնէլի իսկական սպանողն ով
լինելը, բայց անխոհեմութիւն համարեց
հրավարակ հանելու իրողութիւնը, —ուստի
առանձին անծեելով Արշակ թագաւորին
նրա երեսն ի վեր, իսկոյն հեռացաւ, և այլ
ևս ոտք չդրեց պալատ:

Բայց ինչպէս կաթողիկոսի, նոյնպէս և

*) Նոյն. Իդ. էջ 283.

նախարարների ու ժողովրդեան առաջ՝ Արշակը միշտ չքմեղ էր ձեացնում իրան, և ինքն ևս սուգ ու կոծ էր կեղծում։ Եւ ամենաշքեղ յուղարկաւորութեամբ Գնէլի մարմինը Զարիշատ արքունի քաղաքում թաղել տւաւ։

Գաղտնիքը բացւում է

Գնէլի թաղմանից յետոյ Տիրիթը թագաւորին զիմելով թոյլաւութիւն խնդրեց այրիացած Փառանձեմի հետ ամուսնանալու։ Այդտեղ ահա Արշակի աչքը բացւեց։ Եւ որովհետև Նաւասարդի տօներին նա ինքը Փառանձեմին տեսած ու նրա գեղեցկութեամբ հիացած ու զմայլած էր, — ուստի իսկոյն զլիի ընկաւ թէ ինչ նպատակաւ Տիրիթը պատճառ եղաւ Գնէլի սպանմանը։ Վասն որոյ հետամուտ եղաւ իր մէջ ծագած կասկածն ստուգելու։ Եւ ստուգեց էլ։

Տիրիթի սպանումը

Ապա այնուհետև կարգագրեց, որ Տիրիթն

ևս սպանւի։ Տիրիթ նախօրօք լսած լինելով թագաւորի կարգագրութիւնը իսկոյն փախաւ։ Սակայն նրան հետապնդող զինւորները Բասենի (այժմեան Սօգանլուխ) անտառներում նրան բռնեցին ու սպանեցին։ — «Եւ խնդրեցաւ, — գրում է պատմիչը, — անպարտ արիւն Գնէլայ յամբարշտէն Տիրիթայ ըստ անիծիցն Ներսիսի» *):

Տիրիթն սպանւելուց յետոյ՝ Փառանձեմը Արշակի հրամանով տարրեցաւ արքունիք ի կնութիւն նորա, հակառակ իր կամքին, բռնութեամբ։ Դրա ապացոյցն այն է, որ «Փառանձեմ ատեայր զԱրշակ» ոչ միայն նրա համար, որ իր սիրած ամուսինը, Գնէլը գեռ նոր էր վաղճանած, և ոչ թէ նրա համար, որ Արշակը «թաւ էր մարմնով և թուխ՝ գոյնով», — այլ և նրա համար, որ Օլիմբիադա թագուհու հանդէպ նա Արշակի տարփածուի կամ հարճի ստորին գերը պիտի կատարէլը **):

*) Խոլ. Ի�. էջ 286

**) Օրմ. Աղգ. էջ 188:

Օլիմպիադայի ապանումը

Եւ որպէսզի հնար լինի Փառանձեմին օրինաւոր կին և թագուհի հոչակելով՝ նրա սիրաց գրաւել.—Արշակի մէջ մի նոր հղեռնագործ միտք ծագեց, —Օլիմպիադային սպանել:

Իսկ այդ եղեռնագործութիւնը գլուխ բերելու համար՝ Հայոց թագաւորը այս անգամ հայ քահանայի աջակցութեանը դիմեց,

Արքունի դրան երէցներից մինը Մրջնիկ անունով՝ հաղորդութեան բաժակի մէջ խառնած թոյնով՝ սպանեց թագուհուն *):

Այս ամեն ընտանեկան փոթորիկներն, արքունի դրան ու նախարարութիւնների ու ժողովրեան մէջ եղած թեր և դէմ խօսակցութիւններն, Ներսէս կաթողիկոսի իսպառ թողնել հեռանալն պալատից, որոշ չափով նա և խղճի խայթերն անշուշտ առանց փոքր ի շատէ ազդեցութեան չէին կարող անցնել Հայոց թագաւորի մտքի վրայ:

*) Խոր. ԼՂ. էջ 284—Խորենացին և նրանից առ-

Աւելացրէք դրանց վրայ և այն, որ յունաց արքունիքը Օլիմպիադա իշխանուհուն նրան կին տալով և այլ և այլ խոստումներ անելով, տեղիք տւեց նրան դրժելու Շապուհին տւած երգումը և իր թագաւորութեան առաջին տարիներն յունասէր քաղաքականութեան հիտեւել և այգիսով հայ նախարարութեան պարսկասէր մեծագոյն մասը իրեն դէմ զինել—Արշակը մտքումը գրեց իր քաղաքական հայեացքն ևս փոխել, և յունասիրութիւնից պարսկասիրութեան անցնել: Եւ Օլիմպիադայի սպանութիւնը, թերեւս մասամբ, հետեանք էր նաև նրա այդ հայեացքի փոփոխութեանը:

Հալածանք նախարարութեան դէմ

Սակայն քանի մէջտեղում հայ նախարարութիւններ կային. որոնք ինքնագույն ինելով մեր միւս պատմէներն Օլիմպիադայի թունաւորումը Փառանձեմին են վերագրում, մինչդեռ սրբ. Օքմանեանը (Ազգապատումն, էջ 183) այդ ոճիրը Արշակին է վերագրում, բաւականին լուրջ հիմունքներ առաջ բերելով, որոց մէնք ևս համոզւելով այդպէս էլ ահա դուրս բերինք:

բենց ցանկացածը անում էին միմեանց դէմ, որոնք իրենց անվերջ գառասիրական, շահասիրական և քաղաքական ձգտումներից թելադրուած՝ շարունակ վրդովում էին երկրի անդորրութիւնը և նրան ներքին մաքառումների և արտաքին յարձակումների ասպարէզ էին գարձնում, Արշակ թագաւորը մտքումը դրեց գեռ ամենից առաջ հայ նախարարութեան ոյժը ջնջել կամ զոնէ նւազեցնել, և ապա թէ որոշել թէ արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ որ դիրք բռնելն նախապատիւ պէտք է համարել, յունասիրութեամն արդեօք թէ պարակասիրութեան:

Այդ թէկ խելացի, սակայն յանդուգն միտքը, — նախարարութեան ջնջումը կամ ջլատումը, — թէկ վաղուց Արշակի գլխումը պտտում էր, բայց ինչպէս ընտանեկան կեանքում նրա հետ պատահած փոթորիկները, նոյնպէս, և առաւելապէս Գնէլի և իր աներոջ Փառանձեմի հօր Անդովկ Սիւնեաց իշխանի վերջին օրերի վարմունքը փութացրին Արշակի ծրագրին հապճէզ ձեռնարկելը:

Բայց մենք առայժմ դառնանք Սիւնեաց իշխանի այդ վարմունքին:

Անդովկի իշխանը

Այդ ժամանակում Շապուհ արքան ստիպւած լինելով հիւսիսային (Կովկասի) ազգերի յանկարձական յարձակումից իր երկերը պաշտպանել, ի թիւս իր այլ հպատակների, օգնութիւն խնդրեց նաև Հայերից:

Սիւնեաց Անդովկի իշխանը ժողովելով իր 1700 այրուծին՝ փոխանակ Շապուհի թշնամիների վրայ յարձակւելու, — ընդհակառակը պարսից մայրաքաղաքի վրայ գնաց իր թէ նրան պաշտպանելու համար, Եւ այդ ձեռվ պարսիկներին խաբելով արձակ համարձակ Տիղրոն մտաւ և... սկսեց թալանել թէ թագաւորական պալատն ու գանձը և թէ յայտնի պարսիկ իշխանների կայքն ու զոյքը, Եւ այդ ամենը հաւաքելով տարաւ իր հաղաքերդ գիւղը համոզած լինելով, որ Շապուհը անշուշտ յաղթելու է: Բայց Անդովկի մարգարէութիւնը ծակ

գուրս եկաւ, Շապուհը յաղթեց և Սիւնեաց
աշխարհը գալով քարուքանդ արաւ երկիրը,
որտեղից Անդովկի նախօրօք փախել և ոչ
միայն ապաստան էր գտի Բիւզանդիոնում,
այլ և Թէոդոս կայսրից «մեծ պատիւ և
պատրկաց պատրիկ» աստիճանն էր ստա-
ցել *):

Արշակաւանի շինութիւնը

Դառնանք Արշակի ծրագրին: Մասիս լե-
ռան հարաւարեմտեան ստորոտում, որ գէ-
պի Պայազէտ քաղաքն է նայում: Արշակ
մի քաղաք շինեց, որ շուտով «ծովացեալ
լցաւ, մեղաւոր մարդկանց ժողովով», —այն
է գողեր, աւաղակներ, պարտապաններ, կնա-
թողներ և ամեն կարգի ու տեսակի սրիկա-
ներ, վասնզի նախօրօք ի պաշտօնէ յայտա-
րաբած էր թէ «որ ոք անդը բնակեցէ, մի
լիցի ի վերայ նորա իրաւունք դատաստա-
նի» **):

Ամբողջ երկրի խաղաղութիւնը վրդովե-

ցաւ, ընտանեկան խաղաղութիւնը խանգար-
ւեցաւ, կեանքի ապահովութիւնը վեր-
ցւեցաւ, ստացւած և կալւածների կա-
ռավարութիւնն ու կանոնազրութիւնը
տակն ու վրայ եղաւ: Նախարարները քա-
նի քանիցս անգամ բողոքեցին թագաւո-
րին առաջարկելով իր հրամանը յետ վեր-
ցնել: Սակայն Արշակ «ոչինչ լուաւ
նոցա» *), այսինքն բնաւ չլսեց, նոյնիսկ
Ներսէս կաթողիկոսի խորհուրդ ու յորդոր-
ներն, և ոչ միայն չէր ուզում լսել, այլ և
«ծաղը առնէր զբան կաթողիկոսին»: Մին-
չև անգամ Արշակաւանում իրան հա-
մար մի պալատ շինելով՝ ինքն էլ քաշ-
ւեցաւ զնաց այնտեղ բնակւելու:

Արշակաւանի կործանումը

Նախարարները աւելի զայրացան և բո-
զոք բարձին պարսից առաջ: Միւնոյն ժա-
մանակ իրենց զօրքերը հաւաքելով յար-
ձակւեցան Արշակաւանի վրայ և քարու-

*) Պատմ. տանն Սիւական. Էր 33:

**) Խոր. Իէ. Էջ 287:

*) Խոր. Իէ. Էջ 280:

քանդ արին, բնակիչներին էլ կոտորեցին։
Կոտորածից ազատ մնացին միմիայն երե-
խաները կաթողիկոսի միջնորդութեամբ։
Նա կարգադրեց, որ Արշակաւանի մէջ ե-
ղած երեխաներին որթերով (ըթոցներով)
ժողովեն մի մեծ գոմուժ, որ ապաստարանի
փոխարկելով, յետոյ որբերին դարձանող և
սնուցանողներ նշանակեց։ Եւ ահա այդ որ-
բերի ցեղն է, որ յետոյ Որթունի կոչւե-
ցաւ *):

Արշակի վրէժիննդրութիւնը

Նախարարների Արշակաւանի վրայ յար-
ձակւած ժամանակ Արշակը այնտեղ չէր։
Նա խոյս էր տւել կովկասի կողմերը վրա-
ցիներին իրան հետ միաբանեցնելու նպա-
տակաւ *): Եւ կարողացաւ։ Եւ այնուհետև
Հայաստանի բոլոր հիւսիսային գաւառների
գունդերը հաւաքելով վրացիների հետ միա-
սին յարձակւեցաւ նախարարների վրայ
«ինդրել զրէժ ձեռակերտին իւրոյ» **):

*) Նոյն իթ. էջ 291.

**) Խոր. իէ. էջ 288,

Նախարարներն էլ, ի հարկ է, միանալով
միմեանց հետ ինքնապաշտպանութեան դի-
մեցին Ներսէն Կամսարականի հրամանա-
տարութեամբ։ Բայց յաղթւեցան, և նրան-
ցից շատերը Յունաստան փախան։

Նրանց մէջին էր նաև Ներսէն Կամսա-
րականը։ Ուստի Արշակը նրա վրէժը նրա
Ընտանիքիցը լուծեց խաբեբայութեամբ
բռնելով, կոտորելով և մարմինները անթադ
փողոց շպրտելով շներին ի կերակուր։ Քիչ
յետոյ այդտեղից անցկացած սայլորդները,
բարեպաշտութեան զգացմունքից շարժւած,
հաւաքեցին դիակները թաղելու համար։
Արշակն այդ սայլորդներին էլ զլիստել
ուեց *):

Սայլորդների բաղդը վիճակելու էր նաև
Խաղ եպիսկոպոսին. — որին ոտքի տակ գցե-
լու և քարկոծելու հրաման արձակած էր
Արշակ, — եթէ որ Ապահունի նախարարա-
զուն քաջ հղայրները իրանց մերկացրած
սրերով եպիսկոպոսին քարշ տւողներին-
կիսախողխող» անելով նրան չաղատէին։

*) Խոր. իթ. էջ 297.

Արշակի որոշումը

Յոյն և պարսիկ արքունիքը հեռուից դիտում էին հայերի եղբայրասպան կոփը, եւ ուրախանալով՝ իրենց բռնելիք գիրքի մասին էին չափում ու կշռում, ամեն մէկը, ի հարկէ, իր քաղաքական հաշւի համեմատ:

Շապուհի այն քաղաքական ծրագիրը, որով ուզում էր Հայաստանը մի փոքրիկ ինքնավար իշխանութեան վերածել, այժմ հայերի հէնց իրենց ձեռքով ջուրն լնկաւ ի մեծ հաճոյս յունաց, որ Յովիանոսի գաղինքից յետոյ ոչ մի թագուն միջոցի առաջ կանգ չառան հայերի քաղաքական կացութիւնը պառակաել, նախարարներից ոմանց հրապուրելով, ոմանց սագրելով, միւսներին սպառնալիքով ու բռնութեամբ իրանց կողմը ձգելով և լն:

Այս ամենից յետոյ Արշակին ուրիշ ճարչէր մնում քան յունաց գիրկն լնկնելը՝ Ներսէս կաթողիկոսի միջոցաւ: Ուստի անձամբ անձին Ներսէսի ոտքը գնաց,

զղջում յայտնեց, աղաչեց ու պաղատեց, ներումն հայցեց:

Կաթողիկոսը որքան էլ որ վստահութիւն չունէր Արշակի վրայ, այնուամենայնիւն նրա առաջարկը իր յունասիրական գաղափարին համապատասխան գտնելով՝ յանձնառու եղաւ Արշակի կողմից Բիւզանցիոն ուղարկւելիք պատգամաւորութեանը գլուխին անցնել:

Սակայն Վաղէս կայսը, Յովիանոսի դաշնքի վրայ հիմնուելով, յանձն չառաւ օգնել հայերին: Ուստի աշխարհական պատգամաւորներին ունայնաձեռն յետ դարձրեց, իսկ Ներսէսին էլ խոստացաւ անպաշտօն կերպով, թագուն օգնել հայերին, եթէ կաթոպով, թագուն օգնել հայերին, իթէ կաթոպով, յօժարի Արիոսականութիւնը նրանց վկոսը յօժարի Արիոսականութիւնը ներսէս չյօժարեց և Պատընդունել տալու: Ներսէս չյօժարեց *):

Արշակի մահը

Շատ պարզ է, որ Շապուհը անտարբեր կարող չէր մնալ Բիւզանցիոն զնացած հայ մասունքի մնալ Բիւզանցիոն զնացած հայ կատամարութեան նկատմամբ: Ուստի

*) Խոր. 1Ե. էջ 294.

Արշակին Տիգրոն կանչեց բացատրութիւն
ստանալու:

Եւ Արշակը, որ նախարարների մեծ մա-
սից անարգւած ու արհամարհւած էր և
յոյներից անօգնական մնացած, — ստիպւած
գնաց Շապուհի ոտքը, Նա էլ շղթայի զար-
նելով, Խուժաստանի Անյուշ բերդը ձգեց,
ուր Նա անձնասպանութեամբ վերջ տւեց
իր կեանքին *):

Պատ թագաւորը

Արշակի մահից յետոյ դարձեալ մի քանի
նախարարներ ընտանիքով յունաց երկիրը
գաղթեցին: Իսկ մնացածները Մուշեղի ա-
ռաջարկութեամբ մի նոր պատգամաւորու-
թիւն ուղարկեցին Բիւղանդիոն Արշակի
Պապ որդւոյն Հայոց թագաւոր կարգելու,
Վաղէսը կատարեց նախարարների խնդի-

*) Խոր. Լե. էջ 302: Ինչպէս ընթերցողը տեսաւ
Արշակը մի շատ խոշոր և ինքնուրոյն տիպ է իր
լաւ ու վատ և խիզախ գործերով: Հանձարեղ հայ
դրամատուրգը կարող էր նրանից մի նոր և աւելի
խոշոր Համլէտ ստեղծել:

ը և Օլիմպիադա յոյն մօրից ծնած Պա-
պին *) թագաւոր հաստատեց այն պայ-
մանով, սակայն, որ Պապ երկիրը կառավա-
րէ առանց թագաւորի տիտղոսն ստանձ-
նելու եւ թագաւորական արդ ու զարդ
գործածելու:

Վաղէս կայսրը Պապի վրայ դրած այս
պարտաւորութեամբ՝ կամեցաւ Շապուհի
առաջ չքմեղ ձեւանալ, իբրև թէ՝ ինքը Յո-
վիանոսի գաշինքին յայտնի պարբերութիւ-
նը զանց չէ արել կամ եղծել: Սակայն Շա-
պուհ դրանով չխորեւց, այլ ահեղ զօրու-
թեամբ հայերի դէմ մի նոր արշաւանք
սկսեց: Արշաւանքին առաջնորդ հանդիսա-
ցան պարսկասէր հայ նախարարներիցը
Միհրուժան և Վահան-Արտեանը, որոնցից
առաջինին Շապուհն իր դուստրը կնու-
առաջինին իր դուստրը կնու-
թեան տալով և երկրորդին իր քոյրը, եր-
կուքին էլ արքայազուն իշխանների աստի-
ճանին էր հասցրած,

*) Հակառակ մեր պատմիչների ասութեան՝ Օբ-
մանհանը վկայում է, որ Պապը Օլիմպիադայից եր
ծնած, այլ ոչ Փառանձեմից: (Աղքապատում, էջ 203):

Պարսից յանթանակը

Այդ ուրացեալ նախարարները պարսկական բանակների գլուխն անցած, մի կողմից պաշարեցին Արտագերէց անառիկ բերդը (ուր Փառանձեմ թագուհին Տրդատ արքայորդու և յունաէր նախարարների հետ արքունի գանձով ու պաշարով ապաւինած էր) և միւս կողմից Արտաշատ, Վաղարշապատ, Երուանդաշատ, Զարեհաւան, Զարիշատ, Վան և Նախիջևան բաղաքները գրաւեցին և հաղարաւոր ժողովրդին, — նրանց թւում և շատ հրէաներ, — գերի վերցրին: Վերջ ամենայնի պարսիկները տիրեցին նաև Արտագերէցին և նրանում ապաւինածներին բոլորին անխտիր սրի քաշեցին:

Շապուհն իր այս յաղթանակով խրոխտացած ձեռնարկից ողջ Հայաստանի գրաւմանը և հայերի «մազդեզացմանը», — կրօնափոխութեանը:

Դրա համար եպիսկոպոսներին ու քահանաներին ձերբակալելով Պարսկաստան էր աքսորում, այսպիսով ժողովրդին զրկելով կրօնային պաշտամունքները կատարե-

լու հսարաւորութիւնից: Յունարէն գրքերը ժողովում և այրում էր, յունարէն խօսելու ու յունարէնից թարգմանելու արգելում էր և յոյների հետ ծանօթութիւն ու հաղորդակցութիւնն անթոյլատրելի էր համարում *):

Խոշտանգանք իգական սեռի դէմ

Առանձին խստութեամբ Շապուհը ներում էր իգական սեռը, — նախարարների կնանիքներին, որոնց բերգերի մէջ լեցնելով բռնութիւնների էր ենթարկում, որպէսզի իրանց կրօնը ուրանան: Երբեմն էլ պէսզի իրանց կրօնը ուրանան: Երբեմն էլ նրանց մերկացնելով ճանապարհի երկու կողմում շարում էր, որպէսզի մէջտեղից անցնելով իրան դիւր եկածներին միւսներիցը առանձնացնէ:

Այս խայտառակութիւնները պարսիկ ինքնակալն անում էր ոչ այնքան իր ցանկական կրքին յագուրտ տալու նպատակով, կան կրքին յագուրտ տալու նպատակով, որքան այդ կնանիքների ամուսիններին, ծնողներին և եղբայրներին ստիպելու, որ,

*) Խոր. I, 2. էջ 302:

ի պատիւ կանանց, հպատակւեն իր կամքին ու հրամանին, իսկ իրբ տեսնում էր, որ նպատակին չէ հասնում, մերկանդամ կանանց բերգերի պարիսպներից կախ էր տալիս մինչև նրանց մեռնելը: Եւ այնուհետեւ էլ մարմինները պարիսպների վրայ թողնում էր թռչուններին կերակուր: Եւ այս անօրէնութիւններն միայն Շապուհը չէր անում, այլ նրա հրամանով միենոյնն անում էին նաև ուրիշ տեղերում նրա ստորագրեալ պաշտօննեաները, — նրանց թւում նաև Մեհրուժանն ու Վահանը *):

Զիրաւի ճակատամարտը

Այս ամեն բարբարոսութիւններին վերջ դնելու և հայրենիքն ու կրօնը պաշտպանելու համար Ներսէս կաթողիկոսը, — որ թէոդոս կայսեր հրամանովը Պատմոս կըդուց հայրենիք էր վերադարձած, — յաջողւեցաւ նախարարներին միացնել և պարսիկներին պատերազմ յայտնել յոյների

օգնութեամբ: Վերջիններս աեսնելով հայերի կրօնափոխ լինելուց իրանց քաղաքականութեանը սպառնացող վտանգը, այս անգամ Յովիանոսի դաշինքի յայտնի պարբերութիւնը արհամարեցին, առարկելով որ իրանք ոչ թէ հայերին, այլ նրանց քրիստոնէական կրօնի պաշտպանութեան համար են հանդէս եկել և թէ դա իրանց քրիստոնէական անվիճելի իրաւունքն են համարում:

Հայերի այս պատերազմը պարսից դէմյայտնի է Զիրաւի ճակատամարտ անունով **):

Պարսիկները յաղթւեցան և Հայաստանն առժամանակ մի ազատ մնաց նրանց արշաւանքներից:

Եւ Ներսէս կաթողիկոսը, որ անձամբ մասնակցում էր պատերազմին, — ձեռնարկեց ներքին խաղաղութեան ու բարեկարգութեան.

*) Զիրաւը Բագրեանդ գաւառի (այժմեան Ալաշկերտը) Բագաւան (այժմեան Իւշ-Քելիսան) հովիտի միւս ծայրում գտնւաղ ընդարձակ դաշտն է, որ միաժ Դիատին է կոչւում:

Նրա միջնորդութեամբ Պապը վերադարձ-
րեց նախարարներին Արշակի հրամանով
նրանցից խւած կայքերն ու կալւածները
և խոստացաւ «ճայրաբար խնամով վարիլ
ընդ նախարարս»: Նախարարներն էլ յանձն
առան «ծառայել միամտութեամբ, և մի ևս
յաւելցին վտարանջել *»:

Պապի վարքն ու բարքը

Երկրի խաղաղութեան և նախարարների
հետ ճայրաբար վարւելու իր տւած խօս-
քը թագաւորը կատարեց: Նախարարներն
էլ իրանց խօսքը կատարում էին: Սակայն
քիչ ժամանակից յետոյ մի նոր փոթորիկ
եկաւ նոր սկսւած խաղաղութիւնը տակն
ու վրայ անելու:

Երեաց որ Պապը վարք ու բարքով շատ
վատ է, մոլի, ցոփակեաց «ամօթալի ախ-
տիւ դագբագործ» **): Ներսէս կաթողի-
կիկոսի խրատներն ու յորդորներն ապար-
դիւն անցան, և թագաւորը օրըստօրէ շա-

*) Նոյն լ. էջ 308:

**) Նոյն, էջ 308:

տացնում էր իր խէնէշութիւնները, որոնք,
կարելի է ասել, հոգեկան հիւանդութեան
բնաւորութիւն էին ստացել:

Նախարարներն ու ժողովուրդը գայթակ-
զելով գայթակղւեցան և զզւեցան թա-
գաւորից, որին վերջ ի վերջոյ, կաթողի-
կոսը արգելեց «զսեամս եկեղեցւոյն կո-
խել և մտանել նմա ի ներքս»:

Մի կողմից ներսէսի պահանջներն ու
վարմունքը, միւս կողմից նախարարների և
ընդհանուր ժողովրդի տրտունջներն ու բո-
ղոքները, երբորդ կողմից յոյների մունաթ-
ներն ու նենգամիս պահանջները, վերջա-
պէս ներսէս կաթողիկոսի անսպասելի մա-
հը *), որով Պապը ընդ միշտ զրկւեցաւ իր
զօրեղ ու աղղեցիկ պաշտպանից յունաց ար-
քունիքի հանդէպ,—Պապի միտքն ու հոգին
պղտորեցին հօրը նման, և նա մտքումը
դրեց պարսից կողմը գառնալ:

*) Ներսէս կաթողիկոսը վաղուց ի վեր ունե-
ցած սրտի հիւանդութիւնից յանկարծամահ եղաւ,
այլ ոչ Պապից թունաւորուելով, ինչպէս որ միաբե-
րան պնդում են մեր պատմիչները՝ առանց նշտած
լինելու կաթողիկոսի մահւան պարագաները: (Օրմ.
Աղկապ. էջ 21թ):

տակի համար ինչ-ինչ նշաններ ցոյց տւեց, որոնք, սակայն, անտես չմնացին յոյն զօռապետին, որ Արգոսի համար աչքերով հսկում էր հայ արքունիքի մէջ կատարւած ամեն տեսակ անց ու դարձին, և պարբերաբար տեղեկագրում իր արքունիքին, որ երր լսեց Պապի վերջին խորհուրդը, իսկոյն Տերենտիանոս զօրավարին նոր զօրքով Հայաստան զրկեց հապճէպի Նա էլ հայոց թագաւորին բարեկամ ձևանալով մի օր խնճոյքի ժամանակ դաւաճանօրէն սպանել տւեց նրան *):

Արշակ եւ Վաղարշակ

Պապի ցաւալի վաղճանը և յունական ազգեցութեան զօրանալը Հայաստանում տեսնելով պարսկասէր նախալսարները՝ Մանուէլ Մամիկոնեանի ղեկավարութեամբ

*) Խորենացին ասում է (Գլ. Ա. էջ 309), որ Թէոդոս կայսրը Պապին Պօլիս կանչելով՝ այստեղ նրան սպանել է: Ազգապատումի հեղինակը՝ այդ կարծեքը հեթքած է: Այդ Թէոդոս կայսրը նա է, որին հայոց եկեղեցին սըբոց կարգն է դասել:

թագաւոր ընտրեցին Պապի երկու անչափահաս զաւակներին՝ 9 և 10 տարեկաղ Արշակին և Վաղարշակին և առաջարկեցին Շապուհին ի հաստատութիւն: Շապուհը սիրով ընդառաջեց նախարարների ցանկութեանը և մանուկ թագաւորների համար փութաց թագեր ուղարկել, իսկ նրանց Զարմանդուխտ մօր համար էլ՝ «թագ և պատմուճան վառ թագաւորաց»: Իսկ Մանուէլ նախարարին էլ, որ երկրի իսկական կառավարիչն էր լինելու, «թագաւորական պատմուճան սամոյր, և գլխին գարդմանակ ոսկի» և մի քանի ուրիշ արքայակայիլ զարդեր:

Այս ամեն ընծաները Շապուհի կողմից Հայաստան էր բերել պարսից Սուրէն զօրավարը, հետոն էլ 10,000 հեծեալ զօրքի մի բանակ «ի թիկունս օգնութեան զօրավորին Մանուէլի»:

Դերջինս էլ իր այս դիրքը աւելի հաստատուն և տեսական դարձնելու համար՝ Արշակ թագաւորին իրեն փեսայցը իր Վարազգուխտ աղջիկը նրան կնութեան տալով, իսկ Վաղարշակին՝ Մահակ Բագրա-

վաղաժամ մահւամբ զբութիւնը իսկոյն փոխւեց: Թագաւոր Արշակը անկարող էր խստապարանոց նախարարութեանը չափ ու աստիճանի մէջ պահելու, և երկու հակառակորդ պետութիւնների մէջ հոշտ ու խոհեմ ընթացք բռնելու:

Երկրի սպարապետութիւնն ու մանուկ թագաւորի խնամակալութեան աշխատուց Արշակի վրայ և եթ մնաց, որի ժամանակ Հայաստանը շատ խաղաղ վիճակ ունեցաւ, որովհետեւ յոյները այդ ժամանակ Արեւելքի գործերից ձեռնթափ եղան, պատերազմասէր Շապուհն էլ մեռաւ և նրան յաջորդող Արտաշերը ձեռնամուխ եղաւ խաղաղ կառավարութեան:

Եւ ահա երկու հակառակ ազգերի ասմամանակեայ անգործութիւնը ասիթ եղաւ Մանուէլ Մամիկոնեանին գործադրել յօգուտ և ի պատիւ իր ազգին և նրա մանուկ թագաւորին—իր փեսային:

Նոր որոշում

Բայց թէ պարսիկներն և թէ յոյներն ապահովել էին հայերի անվերջ ներքին վէճերից ու շփոթութիւններից, — որոնց

տունու աղջիկն *)

Այդ ամուսնութիւնների առթիւ՝ հարսանեկան մեծամեծ հանդէսներ կատարւեցան: Եւ մանուկ խօսեցեալների պսակի հանդիսագիրը՝ Զաւէն կաթողիկոսն եղաւ:

Պսակւելուց մի տարի յետոյ, սակայն, Գաղարշակը մեռնելով՝ թագաւորական տիտղոսը Արշակի վրայ և եթ մնաց, որի ժամանակ Հայաստանը շատ խաղաղ վիճակ ունեցաւ, որովհետեւ յոյները այդ ժամանակ Արեւելքի գործերից ձեռնթափ եղան, պատերազմասէր Շապուհն էլ մեռաւ և նրան յաջորդող Արտաշերը ձեռնամուխ եղաւ խաղաղ կառավարութեան:

Եւ ահա երկու հակառակ ազգերի ասմամանակեայ անգործութիւնը ասիթ եղաւ Մանուէլ Մամիկոնեանին գործադրել յօգուտ և ի պատիւ իր ազգին և նրա մանուկ թագաւորին—իր փեսային:

Նոր դժբաղդութիւն

Դժբաղդաբար Մանուէլ Մամիկոնեանի

*) Օրմ. Ազգապ. էջ 242—244

սկզբնասլատճառը իրանք էին, պէտք է ասած,—և այլու չկամենալով նորանոր արինանեղութեան և աւերածութեան դռներ բանալ,—Թէոդոս կայսրը և Շապուհ Գ.-ը, որ երկարակեաց Շապուհ Բ.-ի թոռն էր,—փոխադարձ համաձայնութեամբ Հայաստանը երկու մասի բաժանեցին: Մեծ մասը պարսկէներին բաժին ընկաւ, փոքր մասը յոյշերին:

Վերջիններս, այնուամենայնիւ, ձեռքներից գուրս եկած մասը նորից ձեռք բերելու համար՝ միջոցներ չէին խնայում առաւելապէս քաղաքագիտական հղանակով: Այսպէս պարսից ներքին գործերին միջամտեռու առիթ առաջ բերելու համար՝ երբեմն հայերին ախոյեան ու պաշտպան էին հանդիսանում այս ու այն հարցում: Օրինակի համար երբ Թէոդոս Բ.-ը Վոամ Ե.-ի հետ 423 թուին հաշտութիւն կնքեց, գաշնազը մէջ մի յատուկ յօդւած մտցրեց հայերի կրօնական աղատութեան վերաբերեալ:

Դարձեալ՝ երբ 562-ին Յուստինիանոս Մեծը Խոսրով Նուշիրվանի հետ դաշն կապեց, դարձեալ հայերի կրօնական աղատութեան վերաբերեալ:

թեանը համար մի յօդւած մտցրեց:

Սոյն այդ Յուստինիանոսի յաջորդներից մէկն էլ *), մի գեղեցիկ օր, վերկացաւ ու պարսից թագաւորին հետեւեալ նամակը գրեց «հայերը ըմբոստ և անհանգիստ ազգ են, և մեր մէջ ապրելով մեզ միմեանց հետ կուացնում են: Եկ պայմանաւորւենք. ես իմ հպատակ հայերին հաւաքելով Թրաքիա (այժմեան Ռումանիան) ուղարկեմ, իսկ դու հաւաքիր ըո հպատակ հայերին և դէպի Արեւելք քշիր: Եթէ նրանք այն տեղերում կոտորեցին, —նշանակում է մեր թշնամիները կոտորեցան, իսկ եթէ կոտորեցին, մեր թշնամիներին կոտորած կը լինեն. Եւ մենք այնուհեաւ հաշտ կապրենք: Լաւ իմացիր, —շարունակում է յունաց կայսրը քանի որ հայերն իրանց հայրենիքումն են ընակում **), մենք հանգստութիւն չունենք» ***):

Դառնանք մեր նիւթին:

*) Սօրիկ կայսրը, որ Օշկանցի հայ էր:

**) Ընդգծութերն իմն են:

***) Սէբէոս. Գլ. Զ. էջ 75:

Թագաւորութեան անխախտելիութիւնը

Հայաստանը իրանց մէջ բաժանելով հանդերձ թէոլոսն ու Շապուհը, այն ւամենայնիւ, Հայոց թագաւորութիւնը անխախտելի թողին։ Նրանք Արշակին ձեռը չտւին, այլ առաջարկեցին նրան շարունակել իր իշխանութիւնը, որ մասի մէջ՝ որ ինքն է ցանկանում։ Արշակը նախադասեց յունաց բաժինը «ոչ միայն մօրն աղաքաւ, որ էր ի կայսերական քաղաքէն, այլ լաւ համարեալ նուազ կողմանն տիրել և ծառայել քրիստոնեայ թագաւորի, և ոչ յոլովից իշխել և մատանել ընդ լծով հեթանոսաց» *),

Արշակի օրինակին հետևեցան շատ նախարարներ։ Այս պարագան ի նկատի առնելով Շապուհն ստուգեց, որ նախարարների յունաց բաժինին նախապատռութիւն տալու պատճառն այն է, որ նրանք սիրում են Արշակունի թագաւորի իշխանութեան տակ լինել։

*) Խոր. Խթ. էջ 314։

Խոսրով երրորդ

Ուստի Շապուհ ինքն էլ իր բաժնի վրայ փոխանակ պարսիկ մարզպան կարգելու, Հայ Արշակունի Խոսրովին (որ երրորդ կոչւեցաւ) մարզպան կարգեց թագաւոր տիտղոսով։

Շապուհը չը զզջաց իր արածի վրայ։ Յունաստան գաղթելու պատրաստւող նախարարները մտադրութիւնները փոխեցին և գնացողներից շատերը ևս յետ գարձան։ Յունաց Հայաստանում մնացին թագաւորի սննդակից երեք պատանի նախարարազոններ և «այլք անյայտ ոմանք»։ որոնց կայքը Խոսրով յարգունիս գրաւեց Շապուհի թոյլաւութեամբ **), Նոյնիսկ Արշակի կողմանակից մեծ նախարարները—Սահակ Բագրատունի, Սուրէն Խոռոսոունի, Վահան Առաւելեան և Աշխագար Դիմաքսեան յետ դարձնողների վրայ աւելացան ***)

Կաթողիկոսութիւնը հօ, յանձին Ասպուրակէսի, արքէն Պարսկա Հայաստանու մն էր ե պարսից համակիր։

*) Խոր. Խթ. էջ 313—316

**) Նոյնը, էջ 817—319։

Փափուկ դրութիւն

Ասպուրակէս մեռաւ 386-ին և դեռ նյաջորդը չընտրւած մեռաւ նաև Արշակ թագաւորը «հիւանդացեալ մաշարայական ախտիւք *): Նրան փոխարինեց մի յոյն կուսակալ որ ոչ յունաց հայութեան պետի արժանիքը ունէր, ոչ էլ նոյնիսկ իրաւունքը: Բայցի գրանից Ասպուրակէսի մահւամբ մի շատ փափուկ զրութիւն առաջ եկաւ: Հարկաւոր էր կաթողիկոս ընտրել: Բայց ընտրութիւնը պէտք է լինէր պարսկահայութեան և յունահայութեան համաձայնութեամբ:

Խոսրով Գ. գեղեցիկ կերպով դուքս եկաւ
այդ փափուկ դրութիւնից, նա առաջարկեց
կաթողիկոս ընտրել Ներսէս Մեծի Սահակ
որդուն, որ և Գրիգոր Լուսաւորչի հինգե-
րորդ սերունդից էր: Եւ որովհետեւ Լուսա-
ւորչի ցեղը առանձին հմայք էր վայելում
հայ ժողովրդի կողմից ընդհանրապէս, ուս-
տի Սահակի ընտրութիւնը համամտու-
թեամբ ու համերաշխութեամբ տեղի ունե-
ցաւ երկու բաժնի հայերի կողմից ևս.

*) Խոր, ԽԵ. Էջ 32'. Մաշարայական ախտը՝ սրբնի թաց թոքախտն է։ скоротечная чахотка.

Մահակի ընտրութեան առաւելութիւնը

Բացի այդ՝ Սահակի ընտրութիւնը մի այլ
առաւելութիւն ևս ունեցաւ, որ թերես ա-
ռաջինից աւելի զօրաւոր էր: Այդ առաւե-
լութիւնը այն էր, որ Սահակի ընտրու-
թեամբ գոն մնաց և յունաց կառավարու-
թիւնը, և պարսիցը: Առաջինը այն հաշ-
ով, որ Սահակը մանկութիւնիցը Բիւ-
զանդիանում ապրելով և այնտեղ բարձրա-
գոյն ուսում ստացած լինելով՝ կարող էր
յունական ազգեցութիւնը տարածել ամ-
բողջ հայութեան վրայ: Իսկ երկրորդը այն
հաշով, որ Սահակը ի շնորհս իր զար-
դացման՝ ամբողջ հայութեան մէջ ուսում
ու լուսաւորութիւն տարածելով՝ առիթ կը
դառնար հայութիւնն ինքնագիտակցութեան
բերելու, և մի ինքնուրոյն ազգութիւն
կազմելու միանգամայն ազատ ու անկախ
յունական ազգեցութիւնից: Իսկ հայու-
թիւնը յայնիբից ազատ և հեռու պահելու
քաղաքական տենչը պարսիկ իշխանութեան
հին տեսչն էր և տակաւին Շահուհ Բ. ի
օրովն էր սկսւել, ինչպէս իր տեղում ա-

սել ենք, և նպատակ ուներ յունական պարբերական ուսնձգութիւնների հանդէպ մի թումբ ունենալ ի դէմս ինքնավար Հայաստանի պարսից գերիշխանութեան տակ:

Շապուհ Բ.-ի և Շապուհ Գ.-ի գործելակերպը միայն տարբեր էր: Տեսանք որ ուաջինը յոյների և նբանց լեզվի դէմ համաձանք հանեց Հայաստանում, մինչդեռ այս երկրորդը սկսեց քաղցր միջոցներով, մինչև իսկ յունական լեզուն ու գրականութիւնը հովանաւորելով ուզեց հայերին առանձնացնել յոյներից:

Այս դէպօւմ, ի հարկէ, Շափուհ Գ. սխալում էր. թոյլ տալով հայերին Հայաստանը յոյն լեզուի արտագրութիւններով նրա գրականութեամբը ողողելու, և միամտաբար կարծելով, որ հայերին յոյներից հեռացնում է, այնուամենայնիւ պարսից արքայից արքայի այդ բարեմիտ ու միամիտ քաղաքականութեանն է պարտական մեր ազգը, որ Խոսրով Գ. և իր յաջորդներն և ս. Սահակ ու ս. Մեսրոբի գրական կրօնական իշխանութիւնն ևս սկսում էր նախանձելի գառնալ յունահայութեան աշխատում, եւ յոյն մարզպանի վարչութիւնը վերացնելու և յունահայերին ևս Խոսրովի քաղաքական իշխանութեանը ենթարկելու պարզ տրամադրութիւն էր երեսում, ըստ օրինակի կրօնական իշխանութեան ի դէմս կաթողիկոսութեան: Այդ մտքով նոյնիսկ բանակցութիւն սկսեցաւ յունահայութեան ուկեղարը պատրաստեցին:

Իւրաքանչիւր հայի յայտնի է այն մտաւոր արթնացումը և ոգևորութիւնը, որ պարսկահայութեան մէջ ծնունդ ու սնունդ առաւ յիշեալ հոգևորականների եռուն ու զեռուն գործունէութիւմբ, որով հայ ազգի դարուց ի գարս պահպանման և կենդանութեան հաստատուն հիմքը դրւեցաւ *):

Յունահայերի բարի նախանձը

Յունական բաժնի հայութիւնը հիանում և զմայլում էր պարսկական բաժնում առաջ եկած մտաւոր գործունէութեամբ: Եւս Սահակի ու ս. Մեսրոբի գրական կրօնական իշխանութեան հետ Խոսրովի քաղաքական իշխանութիւնն ևս սկսում էր նախանձելի գառնալ յունահայութեան աշխատում, եւ յոյն մարզպանի վարչութիւնը վերացնելու և յունահայերին ևս Խոսրովի քաղաքական իշխանութեանը ենթարկելու պարզ տրամադրութիւն էր երեսում, ըստ օրինակի կրօնական իշխանութեան ի դէմս կաթողիկոսութեան: Այդ մտքով նոյնիսկ բանակցութիւն սկսեցաւ յունահայութեան ուկեղարը պատրաստեցին:

*) Օրմ. Ազգապ. էջ 207.

թեան ներկայացուցիչների և Խոսրով Գ.ի
մէջ *):

Կայսեր վարանումը

Կայսրը իր բաժնի հայութեան տրամա-
դրութիւնը տեսնելով և Խոսրովի հետ տեղի
ունեցրծ բանակցութեան լուրն առնելով,
սկսեց վարանւել ու տատանւել իր բռնելիք
ընթացքի վերաբերութեամբ։ Արհամարել
յունահայութեան տրամադրութիւնը, ան-
մտութիւն կը լինէր և երկիւզալի։

Հալածանքն ու բռնութիւնը նպատակին
չէին հասնել և թերևս «միաբանութեամբ
հայցեն ի նմանէ և տացեն ի պարս
զբաժինն զայն» **), — այսինքն բոլոր հայե-
րը միաբանեն և յունաց բաժին Հայաս-
տանը միացնեն Պարսկա-Հայաստանի հետ։
Վասն որոյ կայսրը ի նկատի առնելով Լու-
սաւորչի ազգատոհմի աւանդական յունա-
սէր ընթացքը և պարսկահայերին յունաց
կողմը շրջեցնելու շանսը, վճռեց յու-
նահայութեան ցանկութիւնը ի կատար
ածել և Պարսկաստանին հնթարկւած ու

*) Խոր. ԽԸ. էջ 323—326։

**) Խոր. ԽԸ. էջ 362։

նրան հարկատու Խոսրով թագաւորի վար-
չական իրաւունքը տարածել նաև յունա-
հայութեան վրայ ևս, միայն թէ ճանաչելով
Բիզանդիոնի գերիշխանութիւնը յունահայե-
րի վրայ և համակերպելով յունական օ-
բէնքներին։

Յունաց կայսեր յետին նպատակը Շա-
պուհ քաջ ըմբռնելով հանդերձ՝ այնուամե-
նայնիւ այդ մտքի իրագործմանը արգելք
չեղաւ, մինչև իսկ զոհութեան նշաններ
ցոյց տւեց, համոզւած լինելով, որ բազ-
մաթիւ պարսկասէր հայ նախարարների
հաւատարմութեան վրայ յենւելով, ինքը
կարող կը լինէր յունական ծրագիրը քա-
րուքանդ անել。—ծրագիր, որ թերևս յոյն
արքունիքի նախընթաց զրգմամբն ու հրա-
հանգովն էր սկսւել ու արծարծւել յունա-
հայութեան մէջ։

Արքայից արքայի հաշիւը սխալ դուրս
չեկաւ։

Նախարարների քսութիւնը

Ոմանք հայ նախարարներից Շապուհին,
հասկացըին։ որ իբր թէ Խոսրովի միտքը

ծուռն է, որ նա առանց արքայից արքայի նախընթաց թոյլտութեանը յունասէր Սահակին կաթողիկոս ընտրել տալով՝ մտքումը զբած է պարսկահայերին յունաց կողմը դարձնել:

Դիենք որ Սահակի կաթողիկոսութիւնը Շապուհը ևս սկզբում օգտակար էր համարել պարսից քաղաքականութեան համար, սակայն քսու նախարարների խօսքելից այժմ գայթակղւելով՝ անհրաժեշտ համարեց անձամբ անձին հայոց թագաւորի բացատրութիւնը լսելու Նա նրան Տիղրոն հրաւիրեց: Խոսրով «զգացեալ զբանսարկութիւն» նախ կամհցաւ գնալ ներկայանալ Շապուհին «որպէս առ իւր իշխան և բարեկամ», բայց յետոյ փոշմանելով՝ յոյներից օգնութիւն է խնդրում, որպէսզի չգնալու դէմքում կարողանայ դիմագրել Շապուհին: Յոյները զլանում են օգնութիւնը, —ուստի Խոսրով «անկարացեալ ընդդիմանալ կամ խուսափել» *), գնաց Տիղրոն՝ առանց բարեկամական ձևերն խանգարելու: Սակայն Շապուհը այդ ձևերից չխարեցաւ, և տե-

ղեկութիւն ունենալով, որ Խոսրով նախ քան Տիղրոն գալին՝ յոյներից օգնութիւն է խնդրել և չէ ստացել *). իսկոյն բռնեց նրան և բանտարկեց Խուժաստանի Անյուշ բերդում: Վերջին կարգադրութիւնն անողը Վամի Գ. Կըման մականւանեալ արքան էր, որ հէսց նոր էր յաջորդել Շապուհին և հայկական գործերին քաջահմուտ էր: Խոսրովի հետ բանտարկւեցաւ նաև յունասէր Գաղաւն կամսարականը:

Իսկ Շաւարշ Կամսարական և Պարգև Ամատունի նախարարներն, որոնք 700 հեծնականերով փորձել էին Խուժաստանի ճանապարհից Խոսրովին փախցնել, յաջողութիւն չունեցան: Ընդհակառակը իրանք էլ զոհ գնացին իրանց տիրասիրութեանը: Պարսիկ պահակախմբից Շաւարշը ճանապարհին սպաննեցաւ, իսկ Պարգևը զերի ընկնելով՝ մորթազերծ եղաւ: Եւ նրա մորթին ուռեցնելով և տիկ շինելով՝ Խոսրովին ներկայացրին Անյուշ բերդում: **):

*) Մենք ենթագրում ենք, որ այդ տեղեկութիւնը Շապուհին հաղորդողը յոյները իրանք կը մնէին կամ մեր պարոկասէր նախարարները:

**) Խոր. Ծ. Էջ 329:

Վոամշապուհ եւ Սահակ

Հայոց թագաւորին իշխանութիւնից զըսր կելով Վոամը թագաւորութիւնը չնչեց այլ Խոսրովի Վաղարշ եղբօրը թագաւոր կարգեց նրա Պահլաւ անունը փոխելով պարսկականի և անւանելով նրան Վոամշապուհ, որ կազմեցաւ Վոամի իրան և իր Շապուհ հօր աննուներից:

Վերեռում ասել ենք, որ քսու նախարար ները Սահակ կաթողիկոսին ևս կասկածելի անձն էին ներկայացրել Շապուհի առաջ Ուստի Խոսրով թագաւորին Տիղբոն մեկնելուց յետոյ կաթողիկոսի և նրա ու Խոսրովի կուսակից նախարարներն ամենքն էին իրենց պաշտօններիցը զրկւած նրատարակւեցան:

Լսելով այս Սահակ Տիղբոն գնաց և իր խոհուն բացարութիւններով ու խոր հուրդներով այն աստիճան գրաւեց Վոամին, որ նա նախ և առաջ պիտական վաւելացմամբ ճանաչեց նրա կաթողիկոսութիւնը, Երկրորդ նրա փեսային որ էր Համա-

պասպ Մամիկոնեանը *) սպարապետութեան պաշտօնը տրւեցաւ, որ Սահակ Բագրատունու մահից ի վեր թափուր էր մնացել:

Երբորդ՝ Մամիկոնեան տոհմը հայոց նախարարութեան հինգերորդ գահը կամ աստիճանը բարձրացաւ: Չորրորդ Կամսարականների և Ամատունիների համար, —որոնք ազգատոհմով կողոպտւած ու աքսորւած էին, —ներում և զթութիւն ստացւեցաւ: Հինգերորդ կալանաւոր Խոսրովին շղթաներից ազատելու և բերդում հանգիստ ապելու արտօնութիւն տրւեցաւ: Վերջապէս վեցերորդ պարսից սրտերում գէպի հայերն վստահութիւն ներշնչեցաւ, եւ այդ վստահութեան հետեանքն էր անա, որ Սահակ և Վոամշապուհ ձեռք ձեռքի տւած ազգային եկեղեցւոյ ու գրականութեան համար ազատորէն գործեցին և այնքան արգասաւոր արդիւնք առաջացրին:

*) Յայտնի է, որ Սահակ, նախ քան կաթողիկոսանալը, կին ուներ, որից մի էդ զաւակ միայն ունեցաւ, —Սահականոյշը, որին ամուսնացը էր Համազասպ Մամիկոնեանի հետ:

Սահակ կաթողիկոս ոչ միայն պարսից արքունիքը հայերի հետ հաշտեցրեց, մինչև իսկ բարեկամացրեց, այլ նաև յունաց արքունիքը: Արովհետեւ նրա ձեռներէցութեամբ ու միջնորդութեամբ յոյների և պարսիկների յարաբերութիւններն ըաղցրացան և դրանով երկու արքունիքի մէջ խաղաղութիւն տիրեց: Եւ այն ինչ որ Խոսրովի համար չարիք էր համարւել, Վոամշապուհի համար բարիք համարւեցաւ և նա սկսեց միանգամայն երկու թագաւորներին ևս ծառայել, իւրաքանչիւրի բաժնի հարկերն իրան հովանաւորին տալով—Պարսիցը արքայից արքային, և յունացը Բիւղանգական կայսեր:

Վոամշապուհի մահը

Ամբողջ 26 տարի ամբողջ Հայաստանը խաղաղութեամբ և ազգաշխն գործունէութեամբ կառավարելուց յետոյ Վոամշապուհը մհուաւ 414 թ. 70 տարեկան։ Նա իրան միակ ժառանգ թողեց տասը տարեկան մի որդի Արտաշէս անունով, որ փոքրութեան

պատճառաւ թագաւորեցնելն անյարմար դատւեցաւ: Ուստի Սահակ կաթողիկոսը նորից Տիգրոն գնաց և Խոսրովին բանտարգիլութիւնից ազատելով նորից թագաւորական գահի վրայ բազմեցրեց, ափսոս, հէնց միայն նրա համար, որպէսզի մի տարուց յետոյ թագաւորական փառքով գերեզմանի ծնի: Արովհետեւ բացի այն, որ Խոսրովը որպէս Վոամշապուհի մեծ եղբայրն ութանասունի մօտ մի ծերունի էր, այլ նաև երկարամեայ բանտարկութեամբ շատ թուլացել էր ինչպէս մարմնապէս, նոյնպէս և հոգեպէս:

Շապուհ թագաւոր հայոց

Խոսրովի մահն ու Արտաշէսի անյարմառութիւնն առիթ գարձաւ Յաղկերտի ձեռին չայոց թագաւորութեան ստեղն ևս վերցնել, ուստի իր Շապուհ որդույն թագաւորի անունով Հայաստան ուղարկեց, յատուկ Իրահանգ տալով նախարարների հնատ փափէրան կատարութեամբ վարւելու, «խօսիք և լանկատութեամբ վարւելու, «խօսիք և ուուր և առիւք» նրանց իրան կուսակից լարձնել, «խրախճանութեամբ և զրոսանօք

որսոց» նրանց բարեկամութիւնը գրաւել
«հկամուտ հարազատութեամբ և ինամու-
թեամբ» նրանց ընտանեկան շրջանակին
վեայ ազգել որպէսզի յաջողի հետզհտէ
պարսից կեանքին ընտելացնել նրանց և «ի
դէն մազգեղանց սաղապեցուցանել, որով
ամենաին զատեցին յունաց, զատուցեալք
այսուհետեւ ի սիրոյ նոցին և յօրինացն» *):

Սակայն Յազկերափ այս ճարտար ծրա-
գիրը զլուխ չեկաւ այն պատճառաւ, որ հայ
նախարարները որքան էլ որ թեթեարաոյ
և յեղյեղուկ քաղաքականութեան հետա-
մուտ էին, այսոււամենայնիւ Արշակունի
ազգատոհմի նախապաշարումը զեռ կըում
էին և նրան չէին կարող փոխանակել մի
Սասանեան կրակապաշտի հետ Միւս կող-
մից Շապունը ինքն էլ ապիկար, անկարող
ոմն յայտնւեցաւ, որ ոչ թէ պատկառանք
ու ազգեցութիւն կարողացաւ գործել նա-
խարարների վրայ, այլ զեռ նրանց համար
խաղալիք ու ծաղրատեղի գարձաւ ու զս-
նազան ծիծաղաշարժ և վիրաւորական մտ-

դիրներ ստացաւ նախարարներից, որոնց
թէն սկզբում տանում էր, բայց վերջերում
թողեց հեռացաւ Հայաստանից, պարսիկ զօ-
րապետին պատէր աալով, որ իրան արհա-
մարող ու ծաղրող հայ նախարարներին
Պարսկաստան ուղարկէ: Բայց նախարար-
ները ընդդիմացան և ներսէս ձիճրակեցու
զեկավարութեամբ պարսիկ զօրքերին Հա-
յստանից փախցրէն թէն, սակայն իրանք
իրանցից որևէ ազգային իշխանութիւն կազ-
մուլ չկարողանալով անիշխանութեան մատ-
նացին երկերը, որ «աղմկաւ և բակում
իսովութեամբ մնացեալ ամս երիս, աւե-
րեալ ամայանար և ամենայն բարեկարգու-
թիւն վրգովեալ ապականէր» *):

Ուր ուրեմն Սմբատ Բագրատունին կա-
րողացաւ մի կերպ համաձայնութեան ու
համերաշխութեան բերել նախարարներին,
որոնք հրտւիրակ ուղարկեցին Սահակ կա-
թողիկոսին, պաղատելով, որ գայ և երկրի
մէջ անդորրութիւն մտցնէ:

*) Խոր. ԾԵ. Էջ 338.

*) Խոր. ԾԶ. Էջ. 341.

Յունաց քաղաքականութեան
փոփոխումը

Պարսից ազգեցութեան հետքնեատէ զօրա-
նալն ու ընդարձակւիլն Հայաւտանում յու-
նաց քաղաքականութեանը ձեռնուու չէր,
ուստի Փոքր Թէոդոս կայսրը Վոամշապուհի
ժամանակ պարսկահայերին արւած արտօ-
նութիւնները յետ վերցնելով յունահայերի
կառավարութիւնը յոյն գործակալի էր յան-
ձնել կուսակալ անունով և այդ պաշտօնը
մի յոյն կոմսի էր տւել: Բացի զրանից
յունաց արքունիքը հայ հոգևորականութեան
վրայ էլ երկարացրել էր իր ձեռքը, ենթար-
կելով նրան փոխանակ Հայոց կաթողիկոսի
կեսարիայի մետրօպոլիտական Աթոռին և
պարտաւորուելով, որ գրագրութիւնը յու-
նաց լեզով լինի, Աստւածապաշտութիւնը
հէկեղեցիներում և ուսուցումը զպրոցներում
դարձեալ յունաց լեզով կատարւի, և ու-
րիշ մի քանի մանր բռնութիւններ:

Սահակի հիմնական գործունէութիւնը
Հայ տառերի գիւտից յետոյ Սահակ կա-

թողիկոսը, կարելի է ասել, ամբողջովին
կլանուած էր պարսկահայերի կրթական
գործով և ի շնորհս իր օգնականների ու
աշակերտների և պարսիկ քաղաքականու-
թեան բարեհաճութեան, կրթութիւնն ու
գորութիւնը և գրականութիւնը մեծ զարկ
էր ստացել Պարսկա-Հայաստանուու:

Իսկ երբ Փոքր Թէոդոսի վերոյիշեալ կար-
գագրութեան լուրն Սահակ առաւ, փութաց
անցաւ Յունա-Հայաստան այնտեղի հայե-
րի գոյութեանը սպառնացող վտանգը խա-
փանելու: Կաթողիկոսը իրեն հետ վերցրեց
Մհարոբին և նրա աշակերտների մի մասին
ևս:

Սահմանագլխի և միւս աեղերի յոյն պաշ-
տօնհանները քազմատեսակ արգելքներ հա-
նեցին կաթողիկոսի և նրա հետեւըդների
առաջ: Բայց Սահակ իրան յատուկ տաղան-
դովն ու տոկունութեամբը կարողացաւ ազ-
գային խոշոր չարեքի առաջն առնել, ազ-
գին և ազգային հոգևորականութեան վրայ
բարդւած՝ մեղադրանքներն ջրելով, մայրենի
լեզուի գործածութեան դէմ սահմանւած ար-

գելքը վերացնելով^{*)} և մինչև իսկ դանա
ղան արտօնութիւններ ձեռք բերելով, ո-
րոցմով Բիւզանդական արքունիքը ձեռնար-
կաց սիրաշահելու հչ միայն Սահակ կաթո-
ղիկոսին, այլ նաև ամբողջ հայ ազգին և
մասնաւորապէս պարսկահայերին.

Այս արտօնութիւններն զեռ նոր էր ստա-
ցել Սահակ կաթողիկոսը և դեռ նոր էր
ձեռնարկել ազգային դպրոցների բացմանը
և հոգեոր դասի մէջ մտած հակազգային
կարգերի վերացմանը, և ահա Սահակ Բագ-
րատունին և միւս նախարարներն եկան
կաթողիկոսին տանելու:

Մեսրոբին իր աշակերտներովը Յունա-
Հայաստանում թողնելով, որպէսզի այնքան
դժւարութեամբ ձեռք բերւած դպրոցական-
եկեղեցական արտօնութիւններն չխափան-
ւին, կաթողիկոսը ճամբայ ընկաւ դէպի իր
Աթոռը:

Կաթողիկոսի վերադարձը

Սահակ կաթողիկոսի գալուստը մխիթարար
*) Խոր. Մէ. Էջ 343—346:

ներգործութիւն ունեցաւ ընդհանուրի վրայ:
Հաղիւ հայրապետանոց հասած՝ Սահակ հա-
մազգային ժողով գումարեց, ուր խորհըր-
դակցութեան զլխաւոր նիւթը երկրի բա-
րեկարգութեան վերականգնելն էր: Ժողո-
վականների միահամուռ ցանկութեամբ ո-
րոշւեցաւ անպատճառ մի թագաւոր ունե-
նալ Արշակունի տոհմից: Ընտրութիւնն էլ
երկար չտեսեց, որովհետեւ միակ թիկնածուն
Վուածաւուհի որդին էր, Արտաշէս անու-
նով, որ արդէն 18 տարեկան չափահաս ե-
րիտասարդ էր գարձել:

Ժողովի որոշումը գրի առնելով Սմբատ
Բագրատունին և Վարդան Մամիկոնեանը
պատշաճաւոր հետերդներով Տիգրոն գնա-
ցին:

Արտաշէսի հաստատութիւնը

Հայաստանի ապագայ խաղաղութիւնը ա-
պահովելու նպատակաւ լստ որոշման հա-
մազգային ժողովի, պատգամաւորութիւնը
ինդրում էր արքայից արքային անցեալ ե-
րակութիւններն ու անցքերը փակւած հա-
մարելով յանցաւորի կամ պատասխանա-

տուների վրայ չանդրագառնալ:

Վսամը վեհանձնաբար զիջաւ: Արտաշէսին թագաւոր հոչակեց, միայն նրա Պահլաւիկ անունը Սասանեան կոչումով Արտաշիրի փոխարկելով: Յանցաւոր նախարարներին «մուրհակ մոռացման յանցանաց կնքեց», — այսինքն յանցանքներն մոռացութիւն տևեց, փոխանակ ներել նուաստացուցիչ բան գործածելու:

Անկախ դրանից ամենատեսակ դրամական մատակարարութիւնները, նոյնպէս և զինւորական հրամանատարութիւնը արքայից արքան հայոց թագաւորի իրաւասութեանը տակ թողեց, առանց պարսիկ գործակալի կամ վերակացուի *)

Ցնծութեամբ ու բերկրանքով պատգամաւորութիւնը վերադարձաւ Հայաստան:

Արտաշէս—Արտաշիրը

Դժբաղարար Արտաշէս—Արտաշիրը այն չեղաւ, ինչ որ սպասում էր Վուամշապուհի որդուցը: Նատ չանցած երիտասարդ թագաւորը անձնատուր եղաւ զանազան մոլու-

*) Օբյ. Ազգապ. Էջ 295:

թիւնների ու խէնէշ ու ցոփ կեանքի: Խորհնացին էլ *), մեր միւս պատմիչներն էլ շատ մոայլ գոյներով հն նկարագրում Արտաշէսի վարքն ու բարքը: Կարծես Պապ թագաւորը կենդանացել էր:

Սահակ կաթողիկոսի խրատ ու յորդորներն նոյնպէս ապարդիւն անցան: Նախարարի բողոքները սաստկացան: Թագաւորի մերձաւորներն ու պաշտպանները յուսահատեցան: Մարդիկ թագաւորի վրայ նայում էին ոչ իբրև հոգեկան հիւանդի վրայ, այլ իբրև մի գիտակից անառակի վրայ: Ուստի վճռեցին տապալել նրան: Հաւաքւեցան կաթողիկոսի մօտ, որպէս զի թագաւորին գահնկէց անհն: Բայց ում բազ ինցնել այդ գահի վրայ: Հայաստանում այլևս ոչ ոք չէր մնացել Արշակունի ցեղից:

Այս ու այն նախարարական ցեղի մի նոր թեկնածուի առաջ քաշեն շատ մեծ խոչընդուների և պառակտումների գուռելը բաց անէր, և աւելի վասնգաւոր հետեւանք կարող էր արտադրել, ի նկատի

(*) Գիրք, Գ. Էջ. 356

առնելով մի կողմից հայ քաղաքտկան
կեանքի յեղեղուկ կացութիւնը և միւս
կողմից նախարարների տգիտութիւնն ու
փառասիրութիւնը,

Այս ամենը աչքի առաջ ունենալով Սա-
հակ կաթողիկոսը յորդորում էր աչքաթող-
անել Արտաշէսի վարքն ու բարքը և նրա
ախտերը երիտասարդութեանը վերագրելով
երկայնամտութեամբ համբերել, որ թագա-
ւորի արարմունքը առաւելապէս դատա-
պարտելի է քրիստոնէական կրօնի տեսա.
կէտով, սակայն ինքը, իբրև հայրապետ,
համբերում ու տանում է ի խոյս ազգային
ապագայ չարիքների:

Կաթողիկոսի այս մաքերին նախարարնե-
րից ոմանք համակերպեցան, սակայն մե-
ծամասնութիւնը թագաւորի գահնէցու-
թիւնն էր պահանջում անպատճառ.

Նախարարների սպառնալիքը

Վերջին կէտի վրայ կանգ առնելով կա-
թողիկոսը շեշտեց թէ պարսից արքունիքը
Արտաշէսին գահից վայր բերելով անշուշտ
Շապուհի նման մէկին կարող է թագաւոր

կամ մարզպան կարգել Հայաստանի վրայ:
Իսկ եթէ խելօք մէկին տւեց այդ պաշտօ-
նը, — աւելի վատ կը լինի ազգի համար:
ուստի ինքը միանգամայն չէ կամենում
«փոխանակել զախտացեալ ոչխար ընդ ա-
ռողջ գաղանի, որոյ առողջութիւնն է մեզ
պատուհաս» *),

Այս խօսքի վրայ նախարարները սպառ-
նալիքի դիմեցին ասելով «մեք կամեցուք
քեզ չքահանայանալ մեզ», — այսինքն եթէ
գու Արտաշէսին փոխելու մասին մեզ հետ
չես միաբանում, ուրեմն գու այլես չես կա-
րող մեր կաթողիկոսը լինել:

Առանց այս սպառնալիքից երկնչելու,
կաթողիկոսը այնուհետև յօժարւեցաւ գո-
նէ չարիքի փոքրագոյնն ընտրել, խորհուրդ
տալով նախարարներին, որ աւելի լաւ է
քրիստոնեայ յունաց կայսեր օգնութեանը
գիմել քան հեթանոս ինքնակալիւ,

Սահակ կաթողիկոսի այս վերջին միաքը
շատ վիճելի է այժմ: Անշուշտ նա վիճելի
կէտ կը լինէր և այն ժամանակ հայ նա-

Խարարների համար, ուստի և նրանք իրաւունք ունեին չը համակերպել կաթողիկոսի այդ մտքի հետ Եւ դրանով ոչ մի վատ բան արած չէին լինիլ. Բայց նրանք շատ վատ բան արին, որ կաթողիկոսի այս միտքն իրեւ փաստ ծառայեցին Վուամի առաջ նրան ևս ամբաստանելով իրեւ ըլարսկատեացի և պետական դաւաճանի, — «զյունովք գինալ խորհրդովմ»):

Վատախմորհութ նախարարների Տիգրոն մեկնած պատուիրակութեանը մասնակից եղաւ, իրեւ հոգեորականութեան ներկայացնիչ, Սուրմակ անունով մի քահանայ, որ Բզնունիք գաւառի հպիսկոպոսութեան փոխանորդութեան պաշտօնն էր վարում:

Ատենական վճիռ

Պատուիրականութեան բողոքներն մանրամասնաբար լսելուց յետոյ Վուամը հայոց թագաւորին էլ, կաթողիկոսին էլ, Տիգրոն կանչեց. Եւ նրանք զնացին:

Ամբաստանեալներին գատելու համար «բաղմամբովս ատեան» գումարեցաւ, ուր

*) Խոր. կդ. էջ 358.

պատուիրակութիւնը ինչպէս թագաւորի, նոյնպէս և կաթողիկոսի վրայ «բաղում աղտեղաբանութիւն և ազգի ազգի խօսս անարժանութեան խօսեցաւ» *):

Ամբաստանեալներն յանցաւոր ճանաչւեցն, ուստի իրենց պաշտօններիցը զրկւեցն:

Վուամը Հայաստանի վրայ Վեհմիհրշապուհ անունով մէկին մարզպան կարգեց, Սուրմակին էլ կաթողիկոս նշանակեց Աթոռի լոկ վարչական ու կալւածական գործերն կառավարելու համար:

Իսկ կրօնական-եկեղեցական գործերն Սահակի վրա թողնւեցան:

Այսպէս ահա վերջացաւ Արշակունեաց թագաւորութիւնը 433 թաւին:

Եւ թէպէտ նախարարներն իրենց գաւաճանութեան պատուղն շուտ ճաշակեցին, թէպէտ Սահակին փոխանակող Սուրմակի, յետոյ Բրիշոյի և յետոյ Շմուէլի արած կաթողիկոսութիւնից ազգին հասած բարոյական, մտաւորական և նիւթական հա-

*) Խոր. կդ. 359.

բւածներին *) ականատես լինելով ստըջացին, զղացին և դարձեալ Սահակի ձեռքն ու ոտքն ընկան պաղատելով, որ նորից կաթողիկոսութիւնը յանձն առնէ ամբողջապէս և պաշտօնապէս, որի համար յանձն էին առնում Վուամի համաձայնութիւնն ձեռք բերել, —սակայն Սահակ հրաժարւելով՝ հրաժարւեցաւ, որևէ գործ ունենալ, —ինչպէս որ նրանց երեսներին ասաց, «արի րանենգ, տիրասպան եւ մատնիչ» մարդկանց հետ, Այլ քաշւելով Բագրեանդի հայրապետանոցը, մի քանի ժամանակից յետոյ էլ Բլուր գիւղը, ուր և վաղճանւեցաւ 89 տարեկան պատկառելի հասակում:


Պատճաշաւոր հանդիսով նրա մարմինը փոխադրւեցաւ իր հայրենի Աշտիշատ սեփական գիւղն:

«Եւ այսօր Մուշի գաւառում Տերեք կոչւած փոքրիկ գիւղի մօտ, անշուք և անձուկ անարդ տեսքով և հաղիւ մարդաչափ բարձրութեամբ մի շէնք կայ, կոշտ ու սեացած կամարով ծածկւած, և կիսով չափ

պատին խառնւած մի քարի տակ հանգչում են Հայ ազգին ու եկեղեցւոյն և լեզուին ու գրականութեանը ամենամեծ եղութիւն ու գրականութեանը՝ բախտաւորի ոսկորները» *):

*) Օրմանեան, Աղգաղ էջ 320







«Ազգային գրադարան



NL0418291

ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԱԾԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Զէնիաթ - զէնիաթ
2. Գլխագին
3. Ապօրինի զաւակը
4. Դինեղն
5. Ռաֆֆիի „Կայծերը”
6. Կացինը քարին կպաւ
7. Մառումներ
8. Պատմական Քաղւածներ Ա. պրակ
9. Պատմական Քաղւածներ Բ. „
10. Պատմական Քաղւածներ Գ. „
11. Պատմական Քաղւածներ Դ. „
12. Պատմական Քաղւածներ Ե. „
13. Պատմական Քաղւածներ Զ. „
14. Պատմական Քաղւածներ Է. „
15. Իսրաէլ Օրինև իր քաղաքակ. ծրագիրը
16. Հայկական հարցի երկրորդ շրջանը
17. Հայկական հարցի երրորդ շրջանը
18. Հայկական հարցի չորրորդ շրջանը
19. Հայկական հարցի հինգերրորդ շրջանը
20. Հայկական հարցի վեցերրորդ շրջանը
21. Պատմութեան դասերը
22. Հրապարակախօսական մանրունը
23. Պատմական Քաղւածներ Բ. պրակ
24. Պատմական Քաղւածներ Թ. պրակ
25. Պատմական Քաղւածներ Ժ. պրակ
26. Ռոճիկ քահանաներին
27. Հայկական հարցի հօթներորդ շրջանը
28. Պատմական զբոյցներ Ա. պրակ - 50 կ.

Դիմել հեղինակին, Բագու,

6863